



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7232

ՀԱՄԱՍՏՈՑ

ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹ

ԱՌՈՒՄՆԱԿԱՆ ԸՆՈՒՅՆ ՎԱՂԱԲՈՒՅՆ

Ի ՊԵՏ ԿԱՐԵԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ



Ի. Ս. ՄԻՔԱՅԵԼԻՆՈՒՅ

Դ. Տիգանույն




Կ. ՊՈԼԻԱ

ՏԵՂՐԱԿԹՈՒՅՆ ՅՈՒՅՆԻ ԳԱՎԱՅՐԱԿ

— 1873 —

91(075)

5-78



Printed in Turkey

ԳԼՈՒԽ Ա.Մ.Ա.ՌՕՏ

Ժ - 78 ամ.

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ : ԲՆԱԿՈՒ ,  
ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի ՊԵՏԱ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ի Ս. ՄԻԳԱՅԻԼԵԱՆԻ

Դ. Տպագրութիւն.



Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աշխարհագրութեան ուսումը Ազգային Գյող-  
րացներուն մէջ ընդհանրացած ըլլալը քիչ ժամա-  
նակուան մէջ բազմաթիւ Աշխարհագրութեանց  
սպառումին յայտնի է :

Աշխարհագրութեանս այս Դ. տարագրութիւ-  
նը վերջի տարիներս պատահած քաղաքական փո-  
փոխութեանց համեմատ սրբագրուած և Ու-  
սումնական աշխարհագրութիւնն ալ աւելի ըն-  
դարձակուած է :

Թէպէտեւ Աշխարհագրութեան Ուսումնական  
մասը առաջ դրուած է , ետքը Բնական և աւելի  
եաքն ալ Քաղաքական մասը , բայց նոր սկսող  
փոքրիկ աշակերտաց համար աւելի աղջկ է որ ,  
նախ Քաղաքական աշխարհագրութեան համա-  
ռօտ մասը դաս տրուի և եաքը Ուսումնական ,  
Բնական մասը և աւելի ետքը Քաղաքականին տէ-  
րութեանց վրայի մասնաւոր ծանօթութիւնն  
ները :



(6470 /  
39)

16669-58

Կ

2004

2237

Հ-Հ-12

Հ. Ա. Մ. Ա. Ռ. Օ. Տ. Տ.

ԱԾԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

~~~

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ երկրիս ստորագրութիւնն է, որ կը սովորեցնէ երկրիս ձեզ, մեծութիւնը, շարժումը, ու իր բնական և քաղաքական բաժանմունքը:

2. Աշխարհագրութիւնը երեք մաս կը բաժնուի, Ուսումնական, Բնական, Քաղաքական:

ՄԱՍՆ Ա.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սահման, հաստատուն և շարժուն աստեղք, մոլորակ, արքաներ և գիտաշոր:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ կը սովորեցնէ աշխարհիս դիրքը և երկնային մարմնոց հետ ունեցած վիրաբերութիւնը:

4. Երկնային մարմին ըսելով կը հասկնամք արեւ, լուսինը և աստղերը: Երկիրս, երկինքը և իրենց մէջ եղած ամեն բաները ի միասին առնելով պիտիլու կը ուին:

Աստղերը կը լլան երկու տեսակ, հասդարուն և շարժուն:

5. Հաստատուն են այն աստղերը, որ արևուն պէս իրենցմէ լցու ունին, և մեզի կերևան թէ չեն շարժիլ և իրենց դիրքը չեն փոխեր: Հաստատուն աստեղաց թիւն անհուն է:

Աստղաբաշխ երկնից համաստառն աստղերը որոշելու համար զարդարեց համաստեղութեանց և կարգերու բաժնած են: Գանի մը խոշոր աստղերը խումբ խումբ առաջ մարգու կենանին և գործիքի առած են, որոց կը ասուի համապեղանիւն: Երկնից երեսը մեծ ու պրակի 117 համաստեղութիւն կայ, գլխաւորները 77 հատ են: 50ը հիւսիսային կողմը՝ 12 Զօդիականին վրայ և 55 ալ հարաւային դին: Համարակածին հիւսիսային 50 համաստեղութիւններն են: Մէծ արջ կամ Սայլ, Փոքր արջ՝ վեհապ, Կեփես, Եղող, Պատէ հիւսիսային, Վահագ կամ Հերակիչ, Քնար, Կարապ, Կասփոս: Պերսկո, Անդրոմէտ, Եռանկիւն հիւսիսային, Կառալիք, Պետառո կամ Մէծ Խաչ, Փոքր ձի, Դրիփին, Նետ, Արծիւ, Յձակալ: Ու Բներինիկեան գես, Ընձուղտ, Աղուէս, Փոքր առեւծ, Ճանձ, Մողեզ, Վահան: Այս աշխատ, Փոքր եռանկիւն, Կերբէրոս:

Զոդիականին 12 համաստեղութիւններն են Խոյ, Յուլ, Երկառոր, Խեցեւան, Արխէս, Կոյս, Կշեռ, Կարիճ, Աղեղնաւոր: Այծեղիւր, Ջրհառ, Չուկն:

Հարաւային 55 համաստեղութիւններն են Անտիոքոս, Կէտ, Երիգանոս, Նապաստակ, Հայկ կամ Որին, Մէծ շուն, Փոքր շուն, Կաւ արդիացւոց, Հիւրա, Ծամանակ, Ագռաւ, Զիացու, Գայլ: Անդան, Պասկ հարաւային, Չուկն հարաւային: Փիւնիկ, Կռուն: Կըն, Աիրամարդ, Հնդիկ, Դրախտահաւ, Եռանկիւն հարաւային: Ճանշան, Գետանաւիւծ, Չուկն թռչական, Տուքան կամ Ապա Ամերիկյ, Արու հիւրա: Տարատ կամ Թրամառ կն, Մէծ ամպ, Փոքր ամպ, Նոյի աղաւնի, Անդեղերու, Տարանկիւն, Արաղազ:

Աստղերը իրենց մեծութեանը նայելով 16 կարգ կը բաժնուին: միջն և երրորդ կարգի աստղերը աշքով կերեան, և միւնները դիտակով: Առաջին կարգի մեծ աստղերը 23 հատ են, շրջը Հիւսիսային դին: Եթե՛ Զոդիականին վրայ, տասներկուքն ալ Հարաւային դին:

Հիւսիսային չորս մեծ աստղերն են, Արբտորոս՝ Եղող համատեղութեան վրայ: Եւ դայիր՝ Քնար համաստեղութեան վրայ: Ա. ալֆու գիրը՝ Կարապի պաշխն վրայ:

Զոդիականի վրայի մեծ աստղերն են, Ալտէսպարան՝ Յուլին Ճակտին վրայ: Կաստոր ու Պողիտեկիս՝ Երկաւորին վրայ: Հուեգիւզան՝ Առիւծին վրայ: Յ. Հ. Ա. Առիւծին պաշխն վրայ, Կուռին հատ կը: Անդարես՝ Կարիճին վրայ, Յունակոս՝ Ջրհանին վրայ: Հիւրային սիրոր: Սիրոս՝ Մէծ շունին վրայ: Պրուին՝ Փոքր շունին վրայ: Ա. բար-

նար՝ Երիդանասին վրայ, Կանովալսու՝ Արդիացւոց նաւուն վրայ: Յ. Հ. Ա. Ա. Արդիացւոց նաւուն վրայ: Զիացուլին ոսքը: Զիացուլին սրուցելը: Խաչն ոսքը: Աիրամարգին աչքը:

6. Շարժուն են այն աստղերը, որ իրենցմէ լցունին, արեգակին կառնեն իրենց լցուն, և իրենց դիրքը կը փոխեն ու արեգակին չուրջը կը դառնան: Շարժուն աստղերը երեք տեսակ կըլլան, Խուրակ, Պընձակ, Քիւնեւակ, Քիւսաւոր:

7. Մոլորակ են այն շարժուն աստղերը, որ արեգակին չուրջը կը դառնան և անկէ կառնեն իրենց լցուն ու տափութիւնը: Երկիրս ալ մոլորակ մ'է: Մինչև 1870՝ հարիւր տասն և եօթը մոլորակը յայտնուած են, որոց գլխաւորներն են արեգակին ունեցած հեռաւորութեանց կարգովը:

|              |                                      |
|--------------|--------------------------------------|
| Ա. Փայլածու, | որ Յ ամիսէն արեգակին չուրջը կըդառնայ |
| Բ. Արուսեակ, | » 7½ » » » »                         |
| Գ. Երիկը,    | » 12 » » » »                         |
| Դ. Հըտոր,    | » 18 » » » »                         |
| Ե. Լուսննոտ, | » 12 տարիէն                          |
| Զ. Երւեակ,   | » 30 » » » »                         |
| Է. Ուրանոս,  | » 84 » » » »                         |
| Ը. Նեղուոն,  | » 165 » » » »                        |

Հիներուն միայն ծանօթ էր Փայլածու, Արուսեակ, Հրատ, Լուսննոտ, Երկաւ մոլորակները, անոնց նայելով այս մոլորակները Արեգակն ալ Լուսինն ալ ի միասին ընդամենը եօթն մոլորակ երկրիս չուրջը կը դառնային: Արբանուը 1871 ին Հերշել աստղաբաշխը երեսաւ և միւս մոլորակները որ հեռադիտական մոլորակ կ'ըսուին 1801 էն մինչև 1870 յայտնուեցան:

8. Արբանեակ կըսուին, որ մոլորակաց չուրջը կը պարսին, և անոնց հետ արեգական չուրջը: Լուսինը երկրիս արբանեակն է: Մինչև հիմա տասն և ութն արբանեակ յայտնուած է:

|           |   |          |      |              |
|-----------|---|----------|------|--------------|
| Երիբը     | 1 | արբանեակ | ունի | որ է լուսինը |
| Լուսանակը | 4 | »        | »    | և մէկ մանեակ |
| Երեսակը   | 8 | »        | »    | և մէկ մանեակ |
| Ուրանուը  | 4 | »        | »    |              |
| Նեպոնին   | 1 | »        | »    |              |

9. Գիսաւոր են այն շարժուն աստղերը, որ ետեւնին գէսի պէս լուսաւոր պոչ մ'ունին, ասոնք ալ արեւն շուրջը կը դառնան և անկէ կառնեն իրենց լոյսը:


Մինչև հիմա 100 էն աւելի զիսաւոր տեսնուած է:

10. Արեգակը, մոլորակները, արբանեակները և գիսաւորները ամենքը ի միասին Աքե՛տիային կամ Մայրակային՝ դրուեան կըսուի:

Արեգակը մոլորակային դրութեան կեղրոնն է, իր չուրջը կը դառնան բոլը մոլորակները արբանեակները և գիսաւորները:

Արեգակը երկրէս 1,407,000 անգամ աւելի մեծ է և երկրէս ունեցած հեռաւորութիւնն է 155,000,000 քիլոմետր:

Արեգակը իր առանցքին վրայ կը դառնայ 25 օրուան 13 ժամու մէջ, որ իր վրայի բիծերէն հասկցուած է: Արեւ հաստատուն աստղ է. բայց աստղաբարձուածներէն կարծէք ընող կայ, որ ան ալ իր մոլորակներով մէկտեղ ուրիշ կեղրոնի մը վրայ կը պատըտի:



Զեւ երկրի, Հորիզոն, Կողմունք երկրի.

11. Երկիրս կը ունի, վասն զի, մարդ մը ընդարձակ դաշտի մը կամ ծովու մը վրայ գտնուած ատեն հեռուն գտնուած շնչերուն, լեռներուն, նաև երուն միայն բարձր մասերը կը տեսնայ:

12. Մէկը ընդարձակ դաշտի կամ ծովու վրայ գլուխուած ատեն կը տեսնայ որ իր չորս կողմէն շրջանակի պէս երկինքը երկրիս հետ կալած է, որուն կեղրոնն

է իր կեցած տեղը, այս զրջանակը կը սուրի հորեղն: 15. Ամեն շրջանակի 560 հաւասար մասի կը բաժնուի, և մէկ մասին կը սուրի ասորին: Մէկ աստիճանը 60 հանրամասի և մէկ հանրամասն ալ 60 հանրերէնորդի կը բաժնուի:

25°. 56°, 42°, կը կարդացուի 25 աստիճան, 56 մանրամաս, 12 մանրերկրորդ:

Ուղիղ գիծ մը որ կեդրոնին վրային անցնելով երկու ծայրը շրջանակին կը դպի կըսուի որամագիծ: որ շրջանակը երկու հաւասար կիսաշրջանակի կը բաժնէ: Մի և նոյն շրջանակի մէջ քաշուած ամեն արամագիծ երկու շատաւեղ ըլլալով իրարու հաւասար են:

14. Ինչպէս նարնջին վրայի խորտ ու բորտ տեղուանքը նարնջին կըրտութիւնը չեն աւրէր, անանկ ալ չեռները և ձորերը երկրիս կըրտութիւնը չեն աւրէր, վասն զի անոնց բարձրութիւնը և խորնկութիւնը երկրիս ընդարձակութեանը նայելով բան մը չեն: Երկրիս չուրջը 40,000 քիլոմէթրի չափ է (մէկ հէլեկտրոն գրեթէ 1,520 կ. Պօլսոց մէյմար արշնի հաւասար է): Երկրիս արամագիծը կամ հաստութիւնը 15,000 քիլոմէթրի չափ է, քանի որ ամենէն բարձր լեռը 8 կամ 9 քիլոմէթրէն աւելի բարձրութիւն չունի:

15. Հովերու ուղղութիւնը և զանազան քաղաքաց իրարու նայելով ունեցած դիրքը որոշելու համար հորիզոնին վրայ չորս գլխաւոր կէտ կը մտածուի, որ կըսուին բնակչուուն կողմանէն երկրի, և են Աքեւել, Աքեւագ, Հեւագ, Հարաւ:

16. Արեւելք կըսուի հորիզոնին այն կողմը ուրիէց արեւ կը ծագի (մարտ 9ին), Արեւմուտք՝ ուր արեւ կը մտնայ, և միշտ Արեւելքին դիմացն է:

Երրոր երեսդ Արեւելքին դարձնես, ձախ կողմէ Հիւսիս և աջ կողմէ Հարաւ է:

Այս չորս գլխաւոր կէտերուն մէջ ուրիշ չորս կէտեր ալ կը մտածուի, որ կըսուին

Արևելքան հիւսէս , որ Արևելքին և Հիւսիսին մէջ  
տեղն է :

Արևմտեան հիւսէս , որ Արևմուտքին և Հիւսիսին մէջ  
տեղն է :

Արևելքան հարաւ , որ Արևելքին և Հարաւին մէջ  
տեղն է :

Արևմտեան հարաւ , որ Արևմուտքին և Հաւարին մէջ  
տեղն է :

Այս ութը կէտերուն մէջ դարձեալ և դարձեալ  
բաժնելով ընդ ամենը 52 կողմ կըլլայ , և այս կողմերը  
ցըցունող աղիւսակին կըսուի հողմացոյց կամ հողմա-  
ցոյց , որ մէջ տեղը շարժական սլաք մը ունի , որուն  
մագնիսացեալ ծայրը միշտ դէպ ի հիւսիս կը նայի :

առօսօս

Երկրիս մոտացածին գծերը , կետերը ,  
Շրջանակները .

17. Աստեղարաշնք աստղերուն ելլալու ու մոռնա-  
լու ժամանակները և վրայի քաղաքներուն տեղերը  
ցըցնելու համար թէ երկրիս և թէ երկնից վրայ մը-  
տացածին գծեր , կետեր և շրջանակներ կերւակայեն ,  
որք են , առանց + , բԼեռ+ , մէծ և փուր շրջանակներ :

18. Առանց + կըսուի երկրիս կեդրոնին վրայէն ան-  
ցած գիծը որուն երկու ծայրը երկրիս մակերևոյթը  
հասած է , և կը մոռածուի որ երկրիս օրական թաւա-  
լրւմը անոր վրայ դառնալով կըլլայ : Առանցքին երկու  
ծայրը բԼեռ կըսուին : Առանցքը երկու ծայրը ունենա-  
լով երկու ալ բևեռ կայ , Հիւսէսային բԼեռ , Հարաւային  
բևեռ :

19. Երկրիս վրայ ութը գլխաւոր շրջանակ կը մը-  
տածուի , չորսը մէծ , և չորսը պատիկ : Չորս մէծ շրջ-  
անակներն են , Հորիզոն , Հասարակած , Սէջքըլայ , Ծէր  
հասարման . ասոնք մէծ շրջանակ կըսուին , վասն զի

գունտը երկու հաւասար կիսագնտերու կը բաժնեն :  
20. Հորիզոնը երկու տեսակ է , Զէտիկ հորիզոն , իմա-  
նակ հորիզոն :

Զէտիկ հորիզոն կըսուի , մարդու մը կեցած տեղին  
շուրջը երկինքը երկրիս հետ կպածի պէս երևցած կը-  
լոր շրջանակը :

Իմանալի հորիզոն կըսուի , մարդու մը կեցած տե-  
ղին ամեն կողմէն 90° հեռու եղած շրջանակը , որ  
զգալի հորիզոնին զուզահեռական է , և գունտը եր-  
կու հաւասար մասերու կը բաժնէ , Քէրին և առորին կի-  
սականագունուլ :

Իմանալի հորիզոնը արեգակին լուսնին և աստե-  
ղաց ելլերու ու մանալու սահմանն է : Իմանալի հորի-  
զոնին երկու բևեռներն են Զէտիկ կամ Գագանակետ  
Նոպէր կամ Սուլահիւր :

Զէտիթը ուղղակի մեր գագաթին վրայ երկնից մէջ  
գտնուած կետն է : Նատիր կըսուի Զէտիթին ուղղու-  
թեամբը մեր ոտքին տակէն անցած վարի կիսագնտին  
մէջ եղած կետը :

21. Հասարակած կըսուի այն շրջանակը , որ երկու  
բևեռներէն իննառևական աստիճան հեռու՝ Արևել-  
քէն դէպ ի Արևմուտք ձգուած է , ու գունտը երկու  
հաւասար կտոր կը բաժնէ , Հիւսէսային և Հարաւային  
կիսականագունութեամբ : Հասարակած կըսուի այս շրջանակը , վասն  
զի ասոր տակի բնակիչներուն գիշերն ու ցերեկը գը-  
րեթէ հաւասար է :

Գիշերականագունութեամբ կըսուին հասարակածին այն կետե-  
րը , որ Ծիր խաւարմանը կը կտրեն , վասն զի արեւ-  
սա կետերուն վրայ հասնելուն պէս երկրիս ամեն կող-  
մը գիշեր ցերեկ հաւասար կըլլայ :

22. Արուեստական երկրագնտին և աշխարհացոյց  
տախտակիներուն վրայ հասարակածին զարդանեռական  
շրջանակներ քաշուած է , իրարմէ 1° էն մինչև 15° բա-  
ցութեամբ , որ քանի բևեռ կերթան կը պլոտիկինան :

23. Միջօրեայ կըսուի այն շրջանակը , որ բևեռէ բերելու ձգուելով՝ հասարակածը կը կտրէ ; ու գուշտը երկու հաւասար կտոր կը բաժնէ : Արևելքն և Աքելքն անդասիւնութ : Միջօրեայ կըսուի , վասն զի , արեւ վրան հասնելուն պէս՝ իր տակը եղած քաղաքներուն կէս օր կըլլայ :

Արուեստական երկրագնտին և աշխարհացոյց տախտակներուն վրայ շատ մը միջօրեական գծեր քաշուած են իրարմէ : 1° էն մինչև 15° բացութեամբ :

24. Ծէր իսաւարման կըսուի այն շրջանակը , որ երկիրը արեգակին շուրջը ըրած տարեկան շրջանը անոր վրայ կընէ , և հասարակածը 25½ աստիճան անկիւնով մը կը կտրէ : Ծէր խաւարման կըսուի , վասն զի , արեւուն և լուսնի խաւարումները աս գծին վրայ կըլլան :

Ծէր խաւարմանը Զորիական ըսուած կամարին մէջ տեղը ձգուած է , որուն վրայ դրուած են 12 կենդանակերպները , որ ամեն մէկուն մէջ երկիրս կամ մեզի երեցածի պէս արեգակը մէյմէկ ամիս կը կենայ :

#### ԴԱՐԱՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ

|           |       |   |
|-----------|-------|---|
| Վ Խոյ     | Մարտ  | 9 |
| Օ Ցուլ    | Ապրիլ | 9 |
| Ռ Արփաւոր | Մայիս | 9 |

#### ԱՄԱՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ

|            |         |    |
|------------|---------|----|
| Ֆ Խեցգետին | Յունիս  | 10 |
| Ջ Առիւծ    | Յուլիս  | 11 |
| Ա Կոյս     | Օգոստոս | 11 |

#### ԱՇՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ

|             |           |    |
|-------------|-----------|----|
| Է Կիռ       | Սեպտեմբեր | 11 |
| Ջ Կարիճ     | Հոկտեմբեր | 11 |
| Հ Աղեղնաւոր | Նոյեմբեր  | 10 |

#### ԶՄԵՈՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ

|            |           |    |
|------------|-----------|----|
| Յ Այծեղիւր | Դեկտեմբեր | 10 |
| Ճ Զրհոս    | Յունուար  | 3  |
| Կ Զուկն    | Փետրվար   | 6  |

25. Գնուին գլխաւոր փոքր շրջանակները չորս են , երկու արեւադարձ , երկու բեւակն և բջանակ . այսինքն , արեւադարձ իւցիւտնի կամ Հեւակային . արեւադարձ այծեղիւր կամ Հարաւային . Հեւսեւային կամ Տրջոյին բեւակն և բջանակ , Հարաւային կամ հակարջոյին բեւակն շրջանակ :

26. Արևադարձ իւցիւտնի կըսուի հասարակածէն դէպի ի չիւսիս 25½ աստիճան հեռու եղած շրջանակը , որ արեւը իր տարեկան շրջանովը հոս հասածին պէս դէպի ի չիւսիս կը դառնայ :

Արեւադարձ այծեղիւր կըսուի հասարակածէն դէպի ի չարաւ 25½ աստիճան հեռու եղած շրջանակը , որ արեւը իր տարեկան շրջանովը հոս հասածին պէս դէպի ի չիւսիս կը դառնայ :

Բեւադարձ շրջանակ կըսուին , բեկոներէն 25½ աստիճան հեռու եղած շրջանակները , որ արեգակը արեւադարձներուն վրայ եկած ատենը մէյմը մէկը մէյմը միւսը արեւը չեն տեսներ , Հիւսիսային բեկոնական շրջանակին արջոյին շրջանակ և հարաւային բեկոնական շրջանակին հակարջոյին շրջանակ ալ կըսուի :

~~~~~

#### ՇԱՐԺՈՒՄՆ ԵՐԿՐԻ

Երկրիս թաշալումը կամ գիշեր ցերեկ ըլլալը , և երկրիս տարեկան շարժումը կամ եղանակաց փոփոխութիւնը .

27. Երկիրս երկու կերպ շարժումն ունի , մէկ մը իր օրական թաւալումը որ իր առանցքին վրայ արեւ

մուտքէն դէպի ի արեւելք կը դառնայ. 24 ժամու մէջ, իր մակերևոյթին ամեն կէտերը յաջորդաբար արեգակին դիմացը գալով դիշեր ցերեկ, առառու երեկոյ, կէսօր և կէս դիշեր՝ վերջապէս օրուան բոլոր զանազան ժամերը յառաջ կուգան. որով մենք կը տեսնանք թէ արեք, լուսինը և բոլոր աստղերը 24 ժամու մէջ երկրիս շուրջը կը դառնան: Աէկ մ'ալ իր տարեկան շարժումը, որէ արեգակին շուրջը մէկ տարուան միջոցին մէջ գառնալը, ամեն օր իր հետքին վրայ մէյմէկ աստիճան յառաջ երթարով, որով դիշերուան և ցերեկուան անհաւասարութիւնը և չորս եղանակաց կանոններոր փոփոխութիւնները յառաջ կուգան:

Երկրիս անգամ մը իր առանցքին վրայ դառնալու ժամանակը մէկ օր կըսուի, բայց օրը երկու տեսակ է, առաջնորդյն օր և արեգակնային օր:

Աստեղային օր կըսուի ժամանակին այն մասը՝ որ աստղ մը իր երեսութական շարժմամբը միջօրէականի մը վրայ տեսնուելին ետքը դարձեալ նոյն միջօրէականին վրայ կը տեսնուի, որէ 25 ժամ 56' 5" 21":

Արեգակնային օր կըսուի ժամանակին այն մասը՝ որ արեգակը իր երեսութական շարժմամբը միջօրէականի մը վրայ գալին ետքը դարձեալ նոյն միջօրէականին վրայ կուգայ, որէ 24 ժամ:

Աստեղային օրը երկրիս իր առանցքին վրայ մէկ անգամ թաւալման ճիշտ ժամանակն է:

Երկրիս մէկ միջօրէականը արեգակին դիմացը գալին միւս անգամ դարձեալ նոյն միջօրէականին դիմացը գալը երկրիս մէկ անգամ իր առանցքին վրայ թաւալումէն աւելի ժամանակ կը տեէ. որովէետե երկրիս իր տարեկան շրջանին վրայ ամեն օր մէյմէկ աստիճան յառաջ կերթայ, որով արեգակնային օրը աստեղական օրէն 5' 56" ի չափ երկայն կըլլայ:

Երկրիս ամեն կողմը դիշեր ցերեկ մի և նոյն տեսքութիւնը չունի, և եղանակներն ալ մի և նոյն չեն,

վասն զի երկրիս առանցքը Ծիր խաւարմանը 25½ աստիճանի անկիւնով մը կտրած ըլլալով իրարու ոչ զուգահեռական են և ոչ ուղղահայեաց, այլ իրարու խոտորնակին, որով մէկ մը մէկ բւեռը և մէկ մը միւս բեւեռը արեգակին դիմացը գալով թէ դիշերուան և ցերեկուան անհաւասարութիւնները և թէ եղանակաց փոփոխութիւնները յառաջ կուգան:

28. Երկրիս արեգակին շուրջը կը դառնայ 56օ որուան 5 ժամու 48 վայրկենի և 51 երկվայրկենի մէջ:

Մարտի 9 ին հասարակածին այն կէտը՝ որ Ծիր խաւարմանը կտրած է և որոյ կըսուի կետ գարնանային դիշերահաւասարի, ճիշտ արեգակին դիմացը գալով բոլոր երկրիս վրայ դիշեր ցերեկ հաւասար, Հիւսիսային կիսագնտին գարնանամուտ և Հարաւային կիսագնտին աշնանամուտ կըլլայ՝ և որ կըսուի գարնանային դիշերահաւասար: Ասկէ ետքը ամեն օր երկրիս իր հետքին վրայ մէյմէկ աստիճան յառաջ երթարով կը տեսնուի որ արեգակը դէպի ի Հիւսիս կը խոտորի, որով յունիսի 9 ին խեցգետին արևագարձը՝ որ հասարակածէն 25½ աստիճան դէպի ի Հիւսիս է, արեգակին շիտակ դիմացը կուգայ, և Հիւսիսային կիսագնտին ամառ և Հարաւային կիսագնտին ձեռու կիսի և Հիւսիսային կիսագնտին ամենէն երկար ցերեկ և Հարաւային կիսագնտին ամենէն երկար դիշերը կըլլայ: Ասկէ ետքը դարձեալ երկրիս ամեն օր իր հետքին վրայ մէյմէկ աստիճան յառաջ երթարով կը տեսնուի որ արեգակը դէպի ի Հարաւ կը խոտորի, և որով սեպտեմբեր 10 ին հասարակածին այն կետը որ Ծիր խաւարմանը կտրած է և որ կետ աշնանային դիշերահաւասարի կըսուի, կուգայ ճիշտ արեգակին դիմացը, և որ երկրին վրայ ամեն տեղ դիշեր ցերեկ հաւասար կըլլայ, և կըսուի աշնանային ո իշերահաւասար, Հիւսիսային կիսագնտին աշնանամուտ է և Հարաւային կիսագնտին դարնանամու: Ասկէ ետքը

դարձեալ կը տեսնուի որ արեգակը հասարաւկածէն անդին դէպ ի Հարաւ կը խոտորի և դեկտեմբեր 9 ին այծեղջեր արեգադարձը ճիշդ արեգակին դիմացը գալով Հիւսիսային կիսադնտին կարձագոյն ցերեկ և Հաւրաւային կիսադնտին կարձագոյն դիչեր և Հիւսիսային կիսակնտին ձմեռնամուտ և Հարաւային կիսագընտին ամառնամուտ կըլլայ : Ասկէ ետքը դարձեալ երկիրս ամեն օր իր հետքին վրայ մէյմէկ աստիճան յառաջ երթալով կը տեսնուի որ արեգակը դէպ ի Հիւսիս կը խոտորի , որով մարտի 9 ին դարձեալ հասարակածին վրայի Հիւսիսային գիշերահաւասարի կէտը արեգակին ճիշտ դիմացը կուգայ , և կըլլայ Հիւսիսային կիսադնտին դարձեալ դարուն , որով ամբողջ մէկ տարին կը լրանայ :

Տարին ալ երկուք է , ժէշբահաւասարի դարձ , որ մէկ գարնանային գիշերահաւասարէն միւս գարնանային գիշերահաւասարի տեսողութիւնն է և է 565 օր 6 ժամ 48 վայրկեան և 31 երկվայրկեան . ոչեժակային կամ առ գիշերահաւասարի դարձ , որ գարնանային գիշերահաւասարի կետը Ծիր խաւարմանին որ կետէն որ սկսած է կամ որ աստղն որ միջօրէականին վրայ էր դարձեալ նոյն կետը կամ նոյն աստղը նոյն միջօրէականին վրայ գալու տեսողութիւնն է , որ է 565 օր 6 ժամ 9 վայրկեան և 13 երկվայրկեան :

Ասկէ կը հետեւի որ ամեն տարի գիշերահաւասարները 20 վայրկեան 22 երկվայրկեանի չափ կը կանխէն , որոյ կըսուի կանխութեան ժէշբահաւասարի , այսինքն գիշերահաւասարի կետը Ծիր խաւարմանին վրայ մեկնած կետը չի կասած յաջորդ տարուան գիշերահաւասարը կըլլայ . Ծիր խաւարմանին այս տեղն է 50,1 մաներկրորդ , որ արեգակնային միջին օրով 20° 22" կընէ :

Այս 50,1 մաներեկրորդ աղեղը 71,856 տարուան մէջ 1 աստիճան կընէ , և 2156 տարուան մէջ 50 աստիճան , որ է ամբողջ կենդանակերպ մը . այս է պատճառը որ

ասկէ 2000 տարւոյ չափ յառաջ գարնանային գիշերահաւասարը՝ արեգակը Խոյ կենդանակերպ մտնալով կըլլայ , հիմայ իրօք ձուկը մոնալով կըլլայ , թէպէտե անունները նոյն պահուած են : Եւ այս հաշով 560 աստիճանը 25868 տարի պիտի տեէ , որ ըսել է այս չափ տարուան մէջ երկիրս ամբողջ իր տարեկան ըրածնը յետախաղաց շարժումով մը պիտի լրացնէ :

Տարին 12 ամիսներու կը բաժնուի , երկրիս արեգական շուրջը մէկ անդամ գարձած ատենը լուսինը երկրիս շուրջը 12 անդամ գառնալուն պատճառաւը : Երկրիս արեգակին շուրջը ըրած հետքը այսինքն Ծիր խաւարմանը ձուածե ըլլալով և արեւն ալ անոր հնոցներուն մէկուն մէջ գտնուելով երբեմն երկիրս արեգակին կը մօտենայ և երբեմն կը հեռանայ , անոր համար թէ օրուան աւողութիւնները և թէ տարւոյն չորս եղանակները մի և նոյն մեծութիւննը չունին :

Արեգակնային միջին օրը միշտ 24 ժամ է :

Գարնան տեսողութիւնն է	92 օր 20 ժ. 42 վ.
Ամառուան	95 օր 14 ժ. 11 վ.
Աշնան	89 օր 17 ժ. 49 վ.
Ձմեռուան	89 օր 1 ժ. 7 վ.
(549) Ամբողջ գիշերահաւասարի տարին է	565 օր 5 ժ. 49 վ.

Քաղաքական տարին առաջ Եգիպտացիք 560 օր կը հաշուէին , և ետքը 565 օր : Հովվմայեցիք առաջ 504 օր , ետքը 555 օր և աւելի ետքը 566 օր կը հաշուէին : Քրիստոնէ 46 տարի առաջ Յուլիոս Կևար 565 օր 6 ժամ կը հաշուէր տարին , և իր կարգադրած տումարը իր անուամբը Յուլիան տոմարը ըսուեցաւ . և մեր աղջը , Ուուսերը , Յոյները այս տոմարը կը գործածէն մինչեւ այսօր : Այս տոմարին նայելով հասարակ տարին 565 օր է , 6 ժամը որ ետ կը ձգուի և տարուան մէջ 24 ժամ կամ ամբողջ օր մ'ըլլալով՝ ամեն չորրորդ



տարին 586 օր հաշուելու սովորութիւն եղած է , որոյ կըսուի նահանջ տարի , որովհետև ֆետրուար ամիսը հասարակ տարին 28 օր ըլլալով նահանջ տարին 29 օր է , մարտ ամսուն առաջին օրը՝ օր մը ետ կը մնայ , և նահանջ ետ մնալ կը նշանակէ :

Յուլեան տոմարին համեմատ տարին 565 օր 6 ժամ համարելով , ճիշդ տարիէն 41 վայրկեան 10 երկվայրկեան աւելի հաշուռած կ'ըլլայ , որ 129 տարուան մէջ 1 օր կընէ և 400 տարուան մէջ ալ 5 օր : Արդէն 525 ին Նիկիոյ Ս. ժողովոյն մէջ որոշուած էր դարնանային գիշերահաւասարը մարտ 21 ին ըլլալ , և ասիէ ճիշդ 1257 տարի ետքը 1582 ին մարտ 11 ին եղաւ գիշերահաւասարը , և սիսալը 10 օրուան հասած էր . Գրիգոր Ժողովայ Պապը այս սիսալը ուղղելու և դարձեալ գիշերահաւասարը մարտ 21 ին բերելու համար 1582 հոկտեմբեր 5 ը հոկտեմբեր 15 համարեց և որոշեց որ անկէ ետքը առաջուան պէս ամեն 4 տարին անդամ մը մէկ նահանջ ըլլայ , բայց 400 տարուան մէջ 3 նահանջ պակաս հաշիւ ըլլայ , այսինքն իւրաքանչիւր 4 դարագլուխ միայն մէկ նահանջ ըլլայ : 1872, 1876, 1880, և լ. թուականներուն նահանջ ըլլայ , որոց վերջի երկու թիւերը 4 ովլ բաժանական են , բայց 1900 ին նահանջ ըլլայ , 2000 ին նահանջ ըլլայ , 2100 , 2200 , 2300 ին նահանջ ըլլայ , 2400 ին նահանջ ըլլայ , հարիւրաւոր թիւը երբ 4 ովլ բաժանական է նահանջ ըլլայ երբ բաժանական չէ նահանջ ըլլայ : Այս կարգադրութեամբ եղած տոմարին ըստեցաւ Գրիգորեան քոնտր , կամ նոր քոնտր որ բոլոր Եւրոպա ընդունած է , և հիմա Յուլեան տոմարէն 12 օր տարրերութիւն ունի և 1900 ին 15 օր պիտի ըլլայ , վասն զի Յուլեան տոմարին համեմատ 1900 թուականէն ետքը մարտ 8 ին պիտի ըլլայ գիշերահաւասարը և Գրիգորեան տոմարով մարտ 21 ին : Տարւոյն ամիսներին ումանք 50 և ումանք 51 են , երբ մէկ՝ ձեռքդ դոցես

և ցուցամատիդ ոսկորէն սկսելով յունվար , վետրվար , մարտ ելն ըստ միւս ցուցամատդ ոսկորներուն և փասերուն մէջ գնելով , ոսկորներուն վրայ եկած ամիսները 51 են և փոսերուն վրայ եկածները 50 : բաց ի վետրվարէն որ հասարակ տարիներուն մէջ 28 օր է և նահանջ տարին 29 օր :

~~~

Լայնութեան , երկայնութեան աստիճանը , բեշեռական աստեղը , շրջարենակ , հակարենակ , հակոտնեայ .

29. Երկու տեղերուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնը որոշելու համար երկու տեսակ աստիճան հնարուած է , լցնութեան և երկայնութեան ասովէնեան :

Լայնութեան աստիճանները միջօրէականին վրայ նշանակուած են . հասարակածէն սկսեալ մինչև ըեւեռ 90° է , որով երկու կերպ լայնութեան աստիճան կոյ , Հետիսային լցնութեան և Հարաւային լցնութեան :

Լայնութեան աստիճաններով կը հասկցուի որ տեղմը հասարակածէն դէպ ի Հիւսիս կամ դէպ ի Հարաւ քանի աստիճան հեռու է , կամ երկու տեղի բարմէ Հարաւէն դէպ ի Հիւսիս քանի՛ աստիճան հեռուութիւն ունին :

Երկայնութեան աստիճանները հասարակածին վըրայ նշանակուած են , առաջին միջօրէին Արևելեան և Արևմուեան կողմերէն սկսեալ մինչև 180° կամ առաջին միջօրէին Արևելեան կողմէն սկսեալ մինչև 560° : Երկայնութեան աստիճաններով կը հասկցուի , որ տեղմը առաջին միջօրէին քանի աստիճան հեռու է , կամ երկու տեղի բարմէ Արևելերէն դէպ ի Արևմուտք քանի աստիճանն հեռաւորութիւն ունին :

Երկայնութեան առաջին աստիճանը սկսած կ'տին վրայէն անցած միջօրէականը առաջին միջտեայ կըսոււի :

Ամեն ազդ իր գիտարանին միջօրեան Ա. միջօրեայ կը բռնէ . ինչպէս Գաղղիացիք Փարիզինը , և Անդղիացիք Կրինիչինը առաջին միջօրեայ կը բռնեն :

Հիները Երկաթի կղզւոյն միջօրեան առաջին միջօրեայ կը բռնէին : Կոստանդնուպոլիս 41°. 1° հիւսիսայինութեան , 26°. 56' Արևելեան Երկայնուսային տակ է ըսեղով կը հասկցուի որ , Կ. Պօլիս հասարակածէն 41°. 1° դէպ ի Հիւսիս և Փարիզէն 26°. 56' դէպ ի Արևելը է :

50. Երկրիս Արևմուտքէն դէպ ի Արևելը օրական թաւալմամբը կը տեսնուի որ աստղերը արեգակը ամեն օր Երկրիս շուրջը կը դառնան , բայց Երկրիս ամեն կողմը մի և նոյն շրջանով չի դառնար , հասարակածը մեծ շրջանով կը դառնայ , իսկ քանի բևեռ Երթաց այնքան փոքր շրջանով կը դառնայ , և բևեռները ամենսին չեն դառնար : Բևեռներուն դիմացը եղած աստղերը կը տեսնուին որ ամենսին չեն դառնար . ուրոնք կըսուին բևեռական ասորդ . Հիւսիսային բևեռին դիմացի աստղը , որ փոքր արջ համաստեղութեան պոչին վրայ է , կըսուի արջոցին բևեռական ասորդ , և Հարաւային բևեռին դիմացի աստղն ալ կըսուի հակառակութեան ասորդ :

51. Աէկը հասարակածին վրայ դտնուած տեսնը բևեռական աստղը հորիզոնին վրայ կը տեսնայ , և քառի օր դէպ ի բևեռ Երթաց բևեռական աստղն ալ հորիզոնէն այնքան վեր բարձրացած կ'երևայ : Հասարակածէն 23° հեռու տեղէ մը բևեռական աստղը հորիզոնէն 23° վեր բարձրացած կը տեսնուի :

Ուստի տեղի մը լայնութեան աստիճանը կրնայ ու ուղուիլ , նոյն տեղին բևեռական աստղին հորիզոնէն ունեցած բարձրութիւնը գտնալով :

52. Արեգակը 24 ժամու մէջ Երկրիս շուրջը դառնալով 360° տեղ կառնէ , ըսել է 1 ժամու մէջ 15° , 1° ալ և վայրիկնի մէջ . Եթէ երիւու քաղաքներուն

ժամերուն տարբերութիւնը գիտնանը , անոնց Արևելքէն դէպ ՚ի Սլեմուաք ունեցած հեռաւորութիւննին աստիճանով կրնանը որոշել . ուստի Ա. միջօրեայ համարուած տեղին վրայ լարուած ժամացոյց մը ունենալով , բոլոր տեղերուն Երկայնութեան աստիճանը կըրանայ գտնուեիլ : Տեղի մը ժամէն 2/2 առաւել առաջ ըլլայ , նոյն տեղին Արևելեան Երկայնութիւնը կըլլայ 2/2 անգամ 15° , այսինքն 37° , 50° :

53. Երկրագնատին այն բնակիչները , որք մի և նոյն զու գահեռաւական շրջանակի վրայ՝ բայց իրարմէ նոյն շրջանակի տակ , շրջանակի կըսուին , որոց եղանակն ու 180° հեռու էն , շրջանակի կըսուինը , որոց կէս օրն ու կէս գիշերը մի և նոյն ատենի մէջ կըլլայ բայց եղանակին հակառակ է , մէկուն ամառ եղած ատեն միւսին ձմեռ , մէկուն գարուն եղած ատեն միւսին աշուն կըլլայ :

Այն բնակիչները որ նոյն լայնութեան աստիճանը ունին մի և նոյն միջօրէականի տակ , բայց հակառակ բևեռի մէջ , կըսուին հակառակ , որոց կէս օրն ու կէս գիշերը մի և նոյն ատենի մէջ կըլլայ բայց եղանակին հակառակ է , մէկուն ամառ եղած ատեն միւսին ձմեռ , մէկուն գարուն եղած ատեն միւսին աշուն կըլլայ :

Այն բնակիչները , որ նոյն լայնութեան աստիճանանը ունին հակառակ բևեռի մէջ և միջօրէականին ալ հակառակ , իրարմէ 180° հեռու , կըսուին հակառակ , որ եղանակին հակառակ ըլլալով մէկուն կէս օր եղած ատենը միւսին կէս գիշեր կըլլայ , և ուսքերնին միշտ դէպէդէմ կուգայ :

~~~~~

Գօտիք , Գիրք զնտոյ .

54. Երկու արեալարձները և Երկու բևեռական շրջանակները Երկրագունադր հինգ գօտիներու կը բաժնեն , մէկ այբուբեն գօտի , Երկու բարձրաւան գօտի , Երկու շրջապայման գօտի :

ՅՅ. Երկու արեւադարձներուն միջոցը որ 47° լայ-  
նութիւն ունի , այբեցեալ գոտի կըսուի : Արեգակին շա-  
ռաւիլները այս գօտոյս վրայ զրեթէ ուղղահայեաց  
զարնելով սաստիկ տաք կըլլայ : Այս տեղի բնակիչնե-  
րը միայն երկու եղանակ կունենան , մէկը սաստիկ ու  
չոր տաք , միւսը անձրեային : Յերեկ ատեն իրենց ձը-  
գած շուքին նայելով երկաստերէ կըսուին . արեգակը  
իրենց Հարաւային կողմը եղած ատենը շուքերնին դէպ  
ի Հիւսիս կը ձգեն , և Հիւսիսային կողմը եղած ատենն  
ալ իրենց շուքը դէպ ի Հարաւ կը ձգեն : Տարին երկու  
ալ արեգակը իրենց գլխուն վրայ գտնուելով ամե-  
նեին շուք չեն ձգեր , և կըսուին ռաստուերէ :

ՅՅ. Արեւադարձներուն և բևեռական Մջանակնե-  
րուն միջոցները , որ 45° լայնութիւն ունին , են եր-  
կու բարեխառն գօտիները , մէկը կըսուի Հիւսիսային  
բարեխառն գօտի , միւսը Հարաւային բարեխառն գօ-  
տի : Արեգակին շառաւիլները այս գօտիներուս վրայ  
զրեթէ խոտորնակ զարնելով , բարեխառն տաքութիւն  
մը յառաջ կուգայ , և տարւոյն շորս եղանակները կա-  
նոնաւոր կերպով իրար կը յաջորդեն : Այս գօտինե-  
րուն բնակիչները մաստուերէ կըսուին : Որովհետեւ ցե-  
րուն միշտ միշտ դէպ ի բևեռ կը ձգեն :  
բևեռ իրենց շուքը միշտ դէպ ի բևեռ կը ձգեն :

Հասարակածին վրայ միշտ դիշեր ցերեկ հաւասար  
կըլլայ , հասարակածին մինչև բևեռական Մջանակնե-  
րը եղած տեղերուն միշտ դիշերն ու ցերեկը անհաւա-  
սար է :

ՅՅ. Բնեռական շրջանակներուն ու բևեռներուն մի-  
ջոցը եղած տեղերը , որ 25½ ական աստիճան լայնու-  
թիւն ունին , կըսուին ցրտային գօտի :

Այս գօտիներուն վրայ արեգակին շառաւիլները  
բոլորովին խոտորնակ զարնելով ամեռով տարին սաս-  
տիկ ցուրտ կըլլայ . և ամեն տեղ մշտնշենաւոր սա-  
ստիկ ցուրտ կըլլայ . և տարին միայն մէկ եղանակ  
ունին , այն է , յաւիտենական ձմեռ : Այս գօտինե-

րուս բնակիչները շրջասրուեր կըսուին . վասն զի ա-  
րեգակը իրենց հորիզոնէն 25½ աստիճանէն աւելի չի  
բարձրանալով զրեթէ իրենց չորս դին կը պտղուի , և  
շուքերնին ալ իրենց շուրջը կը դառնայ : Բնեռական  
շրջանակներուն վրայ մէկ ամիս ցերեկ , մէկ ամիս գի-  
շեր , և ասկէ անդին երկու ամիս ցերեկ , երկու ամիս  
գիշեր , և ասանկ մինչև բնեռին վրայ վեց ամիս ցե-  
րեկ վեց ամիս գիշեր կըլլայ : Բնեռին վրայ երկարա-  
տեած գիշերուան ատեն 3½ ամիսի չափ արշալոյս և վեր-  
ջալոյս կըլլայ , և ամիսէն աւելի ալ լուսին կը տեսնան ,  
և խիստ մութ եղած ատենն ալ Հիւսիսայդ կըլլայ :

ՅՅ. Երկրագունուն երեք դիրքով կը տեսնուի , Ու-  
գել , Խուրու և Զուրէննուակն :

Գնտին ուղիղ դիրքն ան է , որ երկու բևեռները  
միշտ հորիզոնին վրայ կըլլան :

Հասարակածին տակի բնակիչները ուղիղ դիրք ու-  
նին , որով երկնից ամեն աստղերը կը տեսնան :

Խոտոր դիրք գնտոյ կըսուի , որ բևեռներուն մէկը  
հորիզոնէն վեր կը բարձրանայ , խոկ միւսը վար կը  
մնայ :

Հասարակածին ու բևեռներէն դուրս եղած բը-  
նակիչները գունտը այս դիրքով կը տեսնան :

Զուգակեռական կըսուի գնտին այն դիրքը , որ  
հասարակածը հորիզոնին զուգակեռական է , բևեռնե-  
րուն մէկը դէպ ի զէնիդ , և միւսը նատիր շուրուած է :

Երկու բևեռներուն բնակիչները այս դիրքով կը  
տեսնան գունտը :



Լուսին . Երևոյք լուսնի , Խաշարումն .

ՅՅ. Լուսինը երկրիս արբանեակն է , անկէ 49 ան-  
գամ փոքր է և անոր շուրջը կը դառնայ 29½ օրուան  
մէջ այսինքն զրեթէ մէկ ամսուան մէջ : Լուսինը եր-

բեմն երկրիս կը մօտենայ և երբեմն կը հեռանայ, բայց  
անկէ ունեցած միջին հեռաւորութիւնն է 381,000  
քիլոմետր, իր լցու երկրիս պէս արեգակն կառնէ .  
և մեզի երեւայ տարբեր կերպով որ կըսուի Երևանի  
լուսնի :

40. Երբոր լուսինը արեւուն և երկրին մէջ դանուի,  
իր մութ երեսը մեզի դարձած ըլլալով չենք տեսնար,  
և կըսուի նոր լուսնի կամ ժնառանդ լուսնի :

Եօթն ու կէս օր ետքը իր լուսաւոր մասին միայն  
կէսը մեզի կերեւի, ու կըսուի առաջին դասուր :

Տանմէհինդ օր ետքը երկիրս արեգակն ու լուս-  
նին մէջ դանուելով լուսնին լուսաւոր մասը ամբողջ  
մեզի դարձած կըլլայ, որ կըսուի լուսնի լուսնի :

Ասկէ ետքը քիչ քիչ իր լուսաւոր մասը մեզնէ  
ծածկուելով բաներկու երրորդ օրը իր լուսաւոր մա-  
սին դարձեալ կէսը կը տեսնանք, որ կըսուի չէրին  
դասուր :

Վերջապէս լուսինը դարձեալ իր լուսաւոր մասը  
բոլորովին արեգակն դարձելով կը լինիցնէ իր շրջանը  
և կըլլայ նոր լուսնի :

41. Երբեմն նոր լուսնի ատեն արեգակը, երկիրս  
և լուսինը մէկ ուղղութեան մէջ կիյնան, որով արե-  
գակն լցու մեզնէ կը ծածկուի, և կըսուի խառարանն  
արեգակն :

Լուսնի լրման ատեն ալ երբեմն կը պատահի որ ա-  
րեգակը, երկիրս, լուսինը մէկ ուղղութեան մէջ կի-  
յնան, որով երկիրս արգելք կըլլայ՝ լուսինը արեգա-  
կն լուսաւորելու՝ որ կըսուի խառարանն լուսնի :

### Աշխարհացոյց տախտակը .

42. Աշխարհացոյց դաստիակն կըսուին այն թղթերը  
կամ տախտակները, որոց վրայ գծագրեալ են երկրիս  
մակերեսով կամ իր մէկ մասը :

Ոյն աշխարհացոյցները որ ամբողջ երկրիս մակե-  
րեսով կը ցըցնեն կըսուին համարաբաժ . երբոր երկրիս  
կըր դիրքը թղթի վրայ ցըցնենք՝ ան ատեն համասա-  
րածը երկու կիսագնտերու կը բաժնուի . կիսագըն-  
տերուն չուրջը կը դրուին լայնութեան աստիճանները  
ճիշդ զուբահեռական շրջանակներուն ծայրերուն վրայ  
և երկայնութեան աստիճանները հասարակածին վրայ  
կը նշանակուին, որոց վրային կանցնին միջօրէական-  
ները, որք բեեռներուն վրայ իրար կը միանան : Եր-  
բոր երկրիս մակերեսով մակարդակ կերպով ցըցնենք  
առանց անոր կըսը ձեւ մը տալու, ան ատեն համա-  
տարածը քառակուսի ձեւ մը կառնէ, որոյ ձախ կողմե-  
րը լայնութեան աստիճանները կը դրուին միշտ զու-  
գահեռական շրջանակներուն ծայրերը . վերի ու  
վորի կողմերն ալ երկայնութեան աստիճանները կը  
նշանակուին միջօրէականաց ծայրերուն վրայ : Երկրիս  
միայն մէկ մասը ցըցնող աշխարհացոյցներուն վրայ  
լայնութեան և երկայնութեան աստիճանները ճիշդ  
այս կերպով կը նշանակուին . թէպէտև այս վերջի աշ-  
խարհացոյցները շատ անգամ կըսը համատարածներուն  
հաշւովը չինուած են :

43. Ընդհանրապէս ամեն աշխարհացոյցներուն մէկ  
կողմը պղտի չափ մը դրուած է ծանացոյց անունով,  
որոյ միջոցաւ նոյն աշխարհացոյցներուն վրայ տեղերու  
հեռաւորութիւնը կընայ որոշուիլ հավարամէթրով՝  
Գաղղիսյ հասարակ փարախտով, Տաճկի, Անդղիոյ և  
Գերմանիսյ մղոններով ևայլն : Լայնութեան մէկ աս-  
տիճանը հաւասար է 25 Գաղղիսյ հասարակ փարսախի,  
կամ  $11\frac{1}{2}$  հազարամէթրի,  $66\frac{1}{2}$  Տաճկի մղոնի,  $69\frac{1}{2}$   
Անդղիսական մղոնի, 60 Խաւալական աշխարհագրական  
կամ ծովային մղոնի, 15 Գերմանական մղոնի :

44. Ամեն աշխարհացոյցերուն վերի կողմը Հիւսիս ,  
վերի կողմը Հարաւ, աջ կողմը Սրեելք և ձախ կողմը  
Սրեմուածք է :

Արուեստական Երկրագունու և Երկնագունու ,

45. Երկրագունու Երկրիս բնական ձեռ կը ցըցնէ ,  
որոյ վրայ մտացածին շրջանակները իրօք քաշուած  
են : Երկրիս Հասարակածին կողմը ուռեցած և բնեու-  
ներուն կողմը տափակցած է , անանկ որ բնեռային  
տրամագիծը հասարակածին տրամագիծն 24 մղոն  
կարճ է :

46. Երկրագունու կը ներկոյցացնէ Երկինքը , որոյ  
վրայ դրուած են հաստատուն աստղերը իրենց վերա-  
բերական դիրքով :

47. Արուեստական գունտը Երկու կերպով կը  
դառնայ , մէկ մը՝ Արևելքէն Արևմուտք կամ Արև-  
մուտքէն Արևելք կը թաւալի իր առանցքին վրայ , ո-  
րոյ բնեռները հաստատուած է ընդհանուր կամ ու-  
ղանյէ մշշրէականնէն , և մէկ մ'ալ՝ Հարաւէն Հիւսիս կամ  
Հիւսիսէն Հարաւ ընդհանուր հոգելաննի վրայ :

48. Պինմէ միջօրէականը 4 անգամ 90 աստիճանի ,  
այսինքն , 560 աստիճանի բաժնուած է , վերին Եր-  
կու 90 աստիճանները հասարակածէն կըսկին մինչեւ  
բնեռ կերթան , վարի Երկու 90 աստիճանները բնեռ-  
ներէն կըսկին մինչեւ հասարակած կերթան . այս մի-  
ջօրէականին աստիճանները պէտք է որ նայողին աջ  
կողմն ըլլայ :

49. Ընդհանուր հորիզոնը լայն մակարդակ շրջանակ  
մ'է , որոյ վրայ նշանակուած է , Առաջին՝ Երկու  
շրջանակ 4 անգամ 90 աստիճանի բաժնուած , մէկ  
շրջանակին մէջի աստիճանները բնեռներէն կըսկին  
մինչեւ հասարած կերթան , և միւս շրջանակին մէջ  
հասարակածէն սկսելով մինչեւ բնեռ կը համարուին ,  
Երկրորդ՝ Երկու շրջանակ ալ կայ , որոց մէկուն վրայ  
Զողիակոսին 12 կենդանակերպները նշանակուած են  
30 ական աստիճանի բաժնուած , իրենց նշաններովը  
անուններովը և պատկերներովը , և միւսին վրայ նոյն

կենդանակերպներուն համապատասխանող 12 ամիս  
ները նշանակուած իրենց օրերովը : Ամիսներուն օրերը  
նոր տոմարի համեմատ գրուած են : Հին տոմարը նոր  
տոմարին հաւասարցնելու համար 12 աւելցնելու է :  
Երրորդ՝ շրջանակ մ'ալ կայ 32 ի բաժնուած Երկրիս  
կողմերը ցըցնելու համար :

50. Հիւսիսային բևեռին վրայ ժամացոյց մ'ալ հաս-  
տառուած է , գնոտի գործածութեանը համար : Հատ  
գնտի վրայ կողմնացոյց ալ կըլայ Երկրիս դրիցը հա-  
մեմատ գունաը շիտկելու համար :

51. Երկնագնտին վրայ Երկրագնտին շրջանակնե-  
րէն զատ նաև կան ուրիշ շրջանակներ՝ ինչպէս Զորէ-  
ակա , Արևման-ի , Բարձրութեան +առողջութ :

Զորդիակոսը լայն կամար մ'է , որ հասարակածին  
վրայէն քովմափի կանցնի ու 12 ամիսներուն թուովը 12  
կտոր բաժնուած է , որոց վրայ դրուած են կենդա-  
նակերպները Երեսնական աստիճանի բաժնուած :

Ազիմութ է ան շրջանակը , որ Զէնիթէն ու Նա-  
տիրէն անցնելով հորիզոնը Երկու հաւասար կտոր կը  
կորէ , ասով կիմացուիթէ աստղ մը միջօրէէն ո'չչափ  
հեռու է :

Բարձրութեան քառորդը այն պղնձէ բարակ շր-  
ջանակն է , որ գնտին վրայ հեռաւորութիւններ չա-  
փելու կը գործածուի , մէկ ուղղութեան վրայ 0 էն  
մինչև 90° նշանակուած է և միւս ուղղութեան վրայ  
0 էն մինչև 18° :

Երկրագնտին գործածութեամբ լուծուելիք  
առաջարկութիւններ .

52. Ա. Գնորին միջայուածութեամբ հը էամ գեղի հը լայնու-  
թեանը ու Երկայնութեանը գործուլ :

Այն քաղաքը միջօրէականին տակը բերել , վրայի  
աստիճանը լայնութիւնն է , միջօրէականէն կտրած հա-

արակածին վրայ եղած աստիճանն ալ երկայնութիւն  
նըն է : Թէ որ կ. Պօլիս պղնձէ միջօրէականին տակը  
բերեմ, կը դտնամ որ  $41^{\circ}$  լայնութիւն և  $26^{\circ} 36'$  եր-  
կայնութիւն ունի :

Բ. Տեղէ հը լցնութեան և երկայնութեան աստիճանները  
ժիշտաւը նոյն գեղը բնորին վրայ ժողով :

Երկայնութեան աստիճանը հասարակածին վրայ  
գտնալով կը բերեմ նոյն կէտը պղնձէ միջօրէականին  
տակը, և միջօրէականին վրայ եղած լայնութեան աս-  
տիճանին ճիշտ տակն է նոյն տեղը :

Գ. Երկու գեղը հետառորոշնեանը ժողով : Կարկի-  
նով կառնեմ անոնց բացութիւնը և այս բացութիւնը  
հասարակածին վրայ քանի՛ աստիճան որ կը պարու-  
նակէ, նոյն տեղերուն հեռաւորութիւնն ալ այնքան  
աստիճան է : Եթէ ուղեմ նոյն աստիճանաց թիւը մը-  
զոն կամ փարսախ կընեմ բազմապատկելով 23 ով, 60  
ով ևայլն (թ. 45):

Բարձրութեան քառորդն ալ տեղերու հեռաւորու-  
թիւնն աստիճաններով կրնայ որոշել :

Դ. Տեղէ հը լցնութեան աստիճանին համեմատ ժողովը  
շրջէ : Լայնութեան աստիճանին չափովը բենոր հո-  
րիդոնէն վեր կը բարձրացնեմ:

Ե. Տեղէ հը ժամը ժիշտաւը ուրէշ գեղէ հը նոյն աստիճանը  
ժամը առնին ըլլուլ ժողով : Առաջին տեղը կը բերեմ պը-  
զոնձէ միջօրէականին տակը և ժամացոյցին սլաքն ալ  
ժանօթ ժամուն վրայ կը դնեմ . ետքը գունոր կը  
դարձնեմ մինչեւ որ միւս տեղն ալ պղնձէ միջօրէակա-  
նին տակը գայ, սլաքին նշանակած ժամն է բնառածս :

Զ. Որոշեալ օր հը նիւ խռարմանին վրայ արեխակն ժըր-  
ուած գեղը, և իւ խռարմանը կամ հասարակածէն ունեցած  
հետառորոշնեանը, և նոյն օրը արեխակն ո՞ր տեղերուն վրայ  
ուղարկայեաց ժողութելը ո՞ր շրջանը : Նախ կը գտնամ ըստ նոր  
տոմարի հորիզոնին վրայ ամսուն օրը, որոյ դիմացը  
դրուած է կենդանակերպը և իր աստիճանը, նոյն

կենդանակերպը և աստիճանը ծիր խաւարմանին վը-  
րայ կը գտնամ, որ է նոյն օրուան արեգակին տեղը .  
այն տեղը միջօրէականին տակը կը բերեմ, և ասոր  
վրայ եղած աստիճանը կը ցըցնէ արեգակին խոտո-  
րումը, հասարակածէն ունեցած հեռաւորութիւնը .  
և գունոր կը գարձնեմ, միջօրէականին այս աստիճա-  
նին տակէն անցած քաղաքներուն՝ արեգակը նոյն օրը  
կէս օրուան ատեն գաղաթնահայեաց կըլլայ :

Լ. Տեղէ հը օրը և ժամը ժիշտաւը, արեխակն ո՞ր տեղ-  
ուն Հրայ ժամանակահայեաց ըլլուլը ո՞րշէլ : Կը գտնամ  
նոյն օրուան համեմատ արեգակին խոտորումը, և ա-  
ռաջարկեալ տեղը միջօրէականին տակ բերելով ժամա-  
ցոյցին սլաքը կը դնեմ առաջարկեալ ժամուն վրայ, և  
կը դարձնեմ գունոր մինչեւ սլաքը կէս օրուան վրայ,  
12 ին վրայ դայ, (Եթէ առաջարկեալ ժամը Արևելեան  
է, պէտք է Եւրոպական ժամուն վերածել, կամ սը-  
լաքը Արևելեան կէս օրին վրայ բերել. Արևելեան կէս  
օրերը օրացոյցներուն մէջ նշանակուած են) . միջօրէ-  
ականին նոյն օրուան խոտորման աստիճանին տակը  
գտնուած կէտն է, պահանջնեալ տեղը, ուր նոյն օրը  
նոյն ժամուն արեգակը գաղաթնահայեաց կըլլայ :

Ը. Որոշեալ օր հը արեխակն ժախելու և ժաման-  
չամերը . ցերեկուան և ժիշտաւընիւնը ո՞րշէլ : Նախ  
գունոր կը շտկեմ նոյն տեղին լայնութեան աստիճա-  
նին համեմատ, ետքը կը գտնամ արեգակին նոյն օր-  
ուան տեղը ծիր խաւարմանին վրայ, այս կէտը միջօ-  
րէականին տակը բերելով կը դնեմ ժամացոյցին սլա-  
քը 12 ին վրայ, և նոյն կետը Արևելեան հորիզոնին  
վրայ բերելով դիմացը կը դանամ հորիզոնէն ելած կե-  
տը և աստիճանը և ժամացոյցին վրայ ալ ծագելու  
ժամը, և նոյն կետը Արևելեան հորիզոնին վրայ տա-  
նելով, մտնելու տեղը պիտի գտնամ և ժամացոյցին  
վրայ ալ արեւ մարը մոնալու ժամը : Թէ որ արեւ  
ծագելու ժամը կը իներուան երկարութիւնը, և

արևը մարը մտնալու ժամը կրկնեմ ցերեկուան երկարութիւնը կը գտնամ:

Եւ թէ որ արևուն Ծիր խաւարմանին վրայ գըտնուած կէտը Արևելեան և Արևմտեան հորիզոններէն 18° վար իջեցնեմ, ժամացոյցին սլաքը նոյն օրուան արշալոյսը սկսելուն և վերջալոյսը վերջանալուն ժամերը պիտի ցըցնէ: Այս կերպը Եւրոպական ժամերով է: Իսկ թէ որ արևելեան ժամերով յիշեալ դործողութիւնը կատարել ուզուի, Ծիր խաւարմանին վրայ արևուն գտնուած կէտը նախապէս Արևմտեան հորիզոնին վրայ տանելով ժամացոյցին սլաքը 12 ին վրայ դնելու է, և ետքը գունտը դարձնելով նոյն կէտը միջօրէականին տակը բերելով սլաքը պիտի ցըցնէ կէս օրուան ժամը, և նոյն կէտը Արևելեան հորիզոնին վրայ բերելով սլաքը պիտի ցըցնէ արևուն ժաման ժամը, արևելեան կէս օրուան ժամը կրկնելով նոյն օրուան գեշերուան երկարութիւնը կիմացուի:

Թ. Գուշտի ճը իմ ուելի ճը օքը և ժամը հետնալով, որով չեւ ուրիշ առենքն առելու, ուր որենիւ իւ ծանչէ և հարը իւ մանաւ, ու կես օք և կես գիշեր իւլլայ: Նախ կը գտնամ Ծիր խաւարմանին վրայ այն օրուան արենդակին եղած կէտը և կը բերեմ պղնձէ: միջօրէականին տակը և ուրով կորոշեմ խոտորումը, նոյն խոտորման համեմատ բեեուը կը բարձրացնեմ, ետքը նոյն քաղաքը պղնձէ: միջօրէականին տակը բերելով սլաքը որոշեալ ժամուն վրայ կը դնեմ և կը դարձնեմ գունտը մինչև սլաքը 12 ին վրայ գայ, ահա այն տեղերը՝ որ պղնձէ: միջօրէականին վերի մասին տակին են, կէս օր է, վարի կէս մասին տակը եղած տեղերուն վրայ ալ կէս գիշեր է: Արևելեան հորիզոնին վրայ գտնուած տեղերն ալ առաւոտ և Արևմտեան հորիզոնին վրայ գտնուած տեղերն ալ երեկոյ է. և այլն:

Երկնագնուին վրայ առաջարկութիւններ .

55. Ա. Արեգակին կամ աստղին ճը սաղէղ ելքը և իուրաբուժը բուժութիւն կամ աստղին տեղը պղնձէ միջօրէականին տակը բերելու է, միջօրէականին տակը եղած հասարակածին աստիճանը ուղիղ ելքն է, և միջօրէականին աստիճանն ալ, որ արեգական կամ աստղին գտնուած տեղին վրայ է, խոտորումը կը ցըցնէ:

Բ. Գոնաւ ասղածէ ճը արոշեալ օրուան միջ ասուղ ճը երբ կելլայ, երբ միջօրէականին վրայ հունայ, և երբ կը մանաւ: Նոյն քաղաքին լայնութեանը համեմատ բեեուը կը բարձրացնեմ, և Ծիր խաւարմանին վրայ արեգակին տեղը գտնալով կը բերեմ պղնձէ: միջօրէականին տակը և ժամացոյցին սլաքն ալ 12 ին վրայ, և անատենը աստղը Արևելեան և Արևմտեան հորիզոններուն վրայ և պղնձէ միջօրէականին տակը բերելով՝ սլաքը պիտի ցըցնէ աստղին ելլալու մտնալու և միջօրէականին վրայ զալու ժամերը :

Գ. Տեղը և ժամը որոշեալ ըլլալով բուժութիւն երինէց երեալ, անձն որ նոյն ժամուն երինէց երեալ ուսունելի ասուղը բուժութիւն ելլան: Գունտը երկնից գրիցը համեմատ կը ըլլուկեմ, և կը բարձրացնեմ բեեուը տեղւոյն լայնութեան համեմատ, և նոյն օրուան արեգակին տեղը պղնձէ: միջօրէականին տակը կը բերեմ և ժամացոյցին սլաքն ալ 12 ին վրայ. թէ որ որոշեալ ժամը կէս օրէն առաջ է գունտը դէպ ի Արևելք կը գարձնեմ մինչև որ սլաքը որոշեալ ժամուն վրայ գայ, եթէ որոշեալ ժամը կէս օրէն ետք է գունտը դէպ ի Արևմուտք դարձնելու է մինչև որոշեալ ժամը միջօրէականին տակ գայ, գնտին այս դիրքը նոյն ժամուն երկայթն է նոյն տեղին նկատմամբ :

Երկրագնուին և երկնագնուին վրայ խնդիրք ,

1. Գորիք կ. Պօլսոյ , Լոնորայէ , Փարէշէ , Վեճույք , Յիշունցայէ Լայն Սայնունեան և Երկունունեան առայիշանները ջնդին միջամատ :

2. Գորիք ժամանքն վրայ այն առևլուբ որ սահն արևմորեան Երկայնութեան  $2^{\circ}$ ,  $27'$  և հիւս . լայն .  $31^{\circ}, 50'$  .

Արևել . Երկայ .  $14^{\circ}, 2'$  և հիւս . լայն .  $48^{\circ}, 12'$  . Արեւել . Երկայ .  $26^{\circ}, 56'$  և հիւս . լայն .  $41^{\circ}, 1'$  .

3. Գորիք Տաճէն հղուով կ. Պօլսոյ և Քանորեյէ հեռարկութեանը . Ոնդունական հղուով Լոնորայէ և Փարէշէ հեռարկութեանը , Լայն :

4. Շետքէ' ժամանքը կ. Պօլսոյ , Փարէշէ , Լոնորայէ համար :

5. կ. Պօլսոյ ժամ 3 ին Լոնորա , Փարէշ , Բէնբառուրէ ժամը +անէ՞ հըլլայ :

6. Յանձնութ 5 ին արեւելակը հասարակածէն արագի հեռաւուէ , և որ արևելքուն վրայ ժամանակայեաց կը ժողոված :

7. կ. Պօլսոյ յուլիս 31 ժամ 6 ին արեւելակը առ ժամանակայեաց է :

8. Գորիք ժամանքն միջոցաւ նե օդուորու 2 ին կ. Պօլսոյ արեւելակը +անէն իը ժամէ , երբ կե՞ օր կա՞ երեկուն իըլլայ արևելքուն և արևմորեան ժամերով , այսօր շերեկուսն և ժիշտուսն Երկայնութեանները որպատի կը տեսն :

9. կ. Պօլսոյ օդուորու 3 ժամ 4 ին առ առաւազար , կե՞ օր և երեկուն իըլլայ :

10. Գորիք արեւելակն առջել ելք յուլիսէ 15 ին և հոկտեմբէր 15 ին :

Յուլիս ճականն վրայէ Ալլորեպարանն առջիշ ելքը ժորիք :

11. Գորիք որ Ալլորեպարանն առջին վրայէ Համեմուուստ առաջը կ. Պօլսոյ հորեցնեն երբ իը ժամէ , երբ կը ժողոայ , երբ միջօրենն վրայ կուտայ փետրվար 4 ին :

12. Գորիք որ Հայէին Յախ սորին վրայէ Ուժել առաջը

Փարէշէն հորեւանէն երբ իը ժամէ , երբ կը ժողոայ , երբ միջօրենն վրայ կուտայ սորիէ 16 ին :

13. Կորիք յանվար 18 ժիշտուան ժամ 6 ին կամ 5 ին կամ 9 ին Երինց Երեւուն էն տիրուղի կերւէ :

14. Վան հունիս 6 ժիշտուան ժամ 8 ին կամ 8 ին Երինց Երեւուն էն տիրուղի կերւէ :

# ՄԱՍՆ Բ.

## ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՌՀԱԳՐՈՒԹԻՒՆ

**54.** **ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՌՀԱԳՐՈՒԹԻՒՆ** կը սովորեցնէ, առաջին՝ երկրիս վրայի բնական բաժանմունքը, երեւոյթներն ու անոնց ընդհանուր յատկութիւնները. երկրորդ՝ մարդ, և իրեն վերաբերեալ ընդհանուր յատկութիւնները. երրորդ՝ կենդանական, հանքային ու բուսական բերքերը, որոնք երկրիս մէջ կանին կամ կը շարժին :

Ա. ԵՐԿՐԻՍ ԲՆԱԿԱՆ ԲԱԺԱՌՈՒԹԻՒՔ ԵՐԵՒԱՑԹՆԵՐԸ ՈՒ ԱՆՈՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**55.** Երկրիս կամ հողագունտն երեք գլխաւոր մասերու կը բաժնուի, Յամատ, Զուր և Օռ :

## Ա. Յ Ա. Մ Ա. Գ.

**56.** Բոլոր հողագնտիս մակերեսոյթին երեք մասը չուր և մէկ մասը ցամաք է : Ցամաքին այլևայլ կտորները կը սուլին Լեռ, Դաշտ, և այլն :

**57.** Երկրիս վրայի բնական կոնածե բարձրութիւնները լեռ, և իրարու կզած լեռները Գոտի կամ Շըշնոյ լեռնց կը սուլին :

Աշխարհիս ամենն բարյը լեռներն են Ասիս Հեմալյայ լեռներուն մէջ Տաղաւորինք, որ 8,588 մետր բարյը է : Հայուսունիք Արարատ կամ Սասիս լեռը 5,216 մետր բարյը ունի առանք : Ա. Արէիսյէ Անդեռն լեռնց մէջ նեխույ ու Սուրբայ, 6,488 մետր : Երբորյան Ալուեն լեռնց մէջ Սովորոյ լեռը, 4,813 մետր : Առէիսին մէջ Մարտիս լեռը, 5,000 մետր :

Հրաբուխն կը սուլին կրակ ցատքեցնող լեռները, որ ընդհանրապէս ծովեղերեայ տեղուանք կը լլան :

Բարուխին պատճառը գետնին տակը եղած հանքային նիւթերն են, որ յանկարծակի կը բռնկին, կը հալին ու սաստիկ ուժով հողը պատուտելով դուրս կելնեն, կիր եղած քարերով բոցով և մուխով։ Հրաբուխին գուրու վազած հեղուկը լավ կը սուլի :

Հրաբուխները ամեն տակն չեն բռնկիր . կան ալ որ բոլորովին մարած են, ինչպէս Մասիս լեռան մարած հրաբուխը :

**ԾԱՀԱՅԻՆ ՀՐԱԲՈՒԽԻ**, որ ծովուն տակին կը բռնկի, որով նոր կղզիներ գուրս կելնեն, ինչպէս է Սանդուրին կղզին և քովի կղզիները, որ 1707 ին հրաբուխի յառաջ եկած են : Բայց 1866ին Սանդուրին դարձեալ հրաբուխով աներեւոյթ եղաւ և քովին ուրիշ կղզի եղաւ :

**59.** ԳԵՐԵՆԵՇՐԺ կը սուլի երկրիս մէկ կարորին գողդըլալը, որ շատ անդամ հրաբուխին կը լլայ, կրակը ուժով գետնէն դուրս եղած ատենը գետինը կը թոթվէ : Շատ անդամ ալ գետնին տակի կառէւն կը լլայ, որ հողը պատուտելով դուրս ելնելու ատեննին գետինը կը շարժեն :

**60.** Պաշտը կը սուլի երկրիս շիտակ ու տափարակ տեղուանքը : Մեծ դաշտերն են կուինեայի դաշտերը, ուր 10 սոնաչափին աւելի բարձր խոտ կը բռւսնի : Ամերիկայի մէջ Ամազոննեաց գետին քովի դաշտերը 4,000 մղոնի չափ տարածութիւն ունին, ու մէջերնին ամենքն քար չի գտնուիր :

Այն դաշտերն՝ որ անբեր և աւազուտ են, կը սուլին անտառ, որոց ամենէն մեծն է Սահրա անապատը, որ գրեթէ երկու երեք ամսուան ճամբայ միակերպ դաշտ է : Անապատներուն մէջ տեղ տեղ բարեբեր երկիրներ կը գանուին կղզիի պէս, որոնք Ուշակ կը սուլին :

**61.** Ցամաքին վրայ եղած խորութիւնը կը սուլի յուր, որ երկու լեռանց կամ երկու լեռանց դօմիներուն մէջ կը լլայ :

62. Այս կամ անյառ կըսուի երկրիս խորը կամ լեռանց ժայռերուն մէջ եղած մեծամեծ ծակերը :

Աշխարհի մէջ առևէն խոք է Անդավեց կըտէն այբ, որ 9,600 սովորացի խորութիւն առնի : Աստրէն մէջ Թրէսուրի հօտ Աստելպարէն այբ ընդարձակութիւնն էնդանէ անուտանի է, և հզնէն առ մեծանութիւնն առնի :

Շատ առջ այբեր կան՝ որոց վրայէն կրային ջուր մը իւ վառ է, մէջէ իւրը իւ առանց առ առնի յւուզ կը կախունի :

Շան այբը Նաբարէն մէջ է, որ շառները և առէն յանձնանաները կը պառանին, զան շի ասոր գետպանն ածխային էաւ ենթերը մինչ 2½ սովորացի բարձր կը մայ, և որոցին այս կուլը ճահացուն է, անոր համար ասոր մէջ իւնդանին շնուրեր :

Անուտանի է նաև Արտաքիւն մէջ ֆինկաւէ այբը որ հովի ապին իւնդա սաստին բայտանու իւնեւ և ահաստի յայներ կը հանէ :

### Հ. Զ Ո Ւ Ր

63. Ջուրը հեղուկ մարմին մ'է, որ սաստիկ տաքութեամբ գոլործի կը դառնայ . իսկ սաստիկ պաղութեամբ կը սառի :

Զի՞ն և ընդհանրապէս ամէն բանէ առանութիւնն էրնայ առնութիւն ջերմացի ջործիւով, որ առջրաբար 100 սաստինն բանաստ առակի խորոշակ մ'է, մէջէ առիկ առանութիւնն առարածութիւն մէն որ 100 էրորդ սաստինը բարձրանայ՝ ջուրը եռաւը սաստինը կը յըցնէ, իսկ պառանենէն սեղնուելով մէն որ 0 սաստինը էջնայ՝ ջուրին սարելու սաստինը կը յըցնէ :

Երեք տեսակ ջուր կայ հասարակ, հանդային, ծաղային :

### 1° Հասարակ ջուր .

64. Հասարակ կամ անուշ կըսուի ջուրը, որ աղի չէ և հանքային համ չունի, ինչպէս ընդհանրապէս աղբիւներուն, գետերուն և լճերուն ջուրերը :

65. Վաղող ջուրերուն սկսած կամ բլիսած տեղը ան, ակունդ, առնելու կըսուի : Աղբիւները միշտ դէպի ցած տեղերը կը վաղեն, ուրկէ ջրէ ընթացներ յառաջ կուգան :

Փոքր ջրի ընթացքները առան կըսուին : Այն ջրի ընթացքները որ սաստկութեամբ կը վաղեն կըսուին հեղեղ :

Գետ կըսուի մեծ ջուրերուն ընթացքը, որ ուղղակի ծովը կը վաղէ, թափած տեղը գետին բերանը կըսուի :

Վարչ կամ գետակ կըսուի ջրի ընթացք մը, որ գետի մը կամ ուրիշ ջրի ընթացքի մը մէջ կը վաղէ :

Այն ջրի ընթացքներն ալ որ ուղղակի ծովը կը վաղեն, բայց գետ ըսուելու չափ մեծ չեն, վտակ կըսուին :

Վտակներուն կամ գետերուն իրար խառնուած կամ միացած տեղը գետաբնանան կըսուի :

Գետերը շատ անզամ շատ մը ձիւղերու բաժնուած ծովը կը թափին : Երկու ջրի ընթացքներու և ծովի մէջ մնացած ցամաքին մասը ուշնեան կըսուի, որ ընդհանրապէս եռանկիւնի մեռվ կըլլայ :

Սամանուն կղզիին մէջ :

155. Ափրիկէի մէջ 6 գլխաւոր լիճ կայ .

Չառ՝ Նիկրիտիոյ մէջ :

Տէհակա՝ Եթովպայիոյ մէջ :

Ուրէկէէ , Թանկանէիտ և Նվաճ՝ Անծանօթ կամ քիչ ծանօթ աշխարհին մէջ :

Նժառէ՝ Մողամակիքի արևմտեան կողմը :

156. Ափրիկէի մէջ 7 գլխաւոր գետ կայ .

Նեղու՝ որ կը թափի Միջներկրական ծովը :

Անեկան , Կամպէտ , Նէնէր , Զայէրէ , Օրանժ՝ Ատլանտեան ովկիանոսը :

Զամպէշ՝ Հնդկաց ծովը :

—

### Դ. ԱՄԵՐԻԿԱՆ

157. Ա.մերիկան կը բաժնուի 2 մեծ մասերու՝ հիւսիսային Ա.մերիկա , հարաւային Ա.մերիկա , որ Բանամայի պարանոցով իրարու կցուած են :

158. Ա.մերիկայի մէջ 16 աշխարհը կայ , որոց՝ 6 ը հիւսիսային Ա.մերիկայի և 10 ը հարաւային Ա.մերիկայի մէջ են :

Հիւսիսային Ամերիկայի 6 աշխարհներն են .  
Առաջին Ամերիկա , գլուխոր տեղը Նոր Արքանիւն , Արդարաւութիւն , գլուխոր քաղաքը Ֆրետոնիւնուն :  
Արևածագը , մայրաքաղաք՝ Քենտուն :  
Արևածագը , մայրաքաղաք՝ Վաշինգտոն . գլուխոր քաղաք՝ Նոր Եվրոպ , Ֆրետոնիւնուն :  
Արևածագը , մայրաքաղաք՝ Մեծիւնուն :  
Կամ Կեդրոնիւն Ամերիկա , մայրաքաղաք՝  
Կոստարիկան :  
Հարաւային Ամերիկայի 10 աշխարհներն են .  
Գուշնիւն որ կրարու Պաշնակից երեք հասարակաւութիւն են . Նոր կրանարա , Վենեցիւնութեալ և Քենտուն , գլուխոր քաղաք՝ Պատիւնուն :  
Գուշնիւն , գլուխոր քաղաք՝ Գուշնիւն , Բարանունուն :  
Գրանիւն , մայրաքաղաք . Ռիօ Ենանուրո :  
Բերու , գլուխոր քաղաք՝ Լիմա :  
Պուէրտո կամ Պուէրտո Բերու , մայրաքաղաք Լաբանուն :  
Կամ Չունիսաւուն :  
Բարինուայ , մայրաքաղաք Վերանդիւնուն :  
Ուրանիսայ , մայրաքաղաք Մանիս-Արտուն :  
Համ Բլանո , մայրաքաղաք Պուենա-Արտուն :  
Գիւ կամ Զիւ , մայրաքաղաք Սանտիւնուն :  
Բարանիւն , որ քիչ բնակութիւն ունի :  
159. Ամերիկան 6 ասհմանակից ծով ունի .  
Ասունցիւն ովկիանու և Պաֆինի ծով՝ հիւսիսային  
կողմը :  
Արտանուեան ովկիանու և Անդիւնան ծով՝ արևելեան կողմը :  
Մեծ Ուկիանու և Պերինիայ ծով՝ արևմտեան կողմը :  
140. Ամերիկայի մէջ 9 գլուխոր նեղուց կայ .  
Պերինիայ նեղուց՝ Ասիոյ և Ամերիկայի միջոցը :  
Լինելութը , Տեխուն , Գրանիւնուն , Համարուն՝ Նոր Բրտանանիոյ հիւսիսային կողմը :

Պէտիւն նեղուցը՝ Նոր Բրիտանիոյ արևելեան կողմը :  
Պահաճայի ջրանցքը՝ Միացեալ նահանգներուն հարաւային կողմը :  
Մասկունի նեղուցը , և Լութը՝ Բադակոնիոյ հարաւային կողմը :  
141. Ամերիկայի մէջ 17 գլուխոր ծոց կայ , որոց 5 ը մեծ և 12 ը փոքր են :  
Ամերիկայի 5 մեծ ծոցերն են .  
Հուպասնի ծոցը՝ Պաֆինի ծովին ձևացեալ :  
Սուրբ Լաւրենտիոսի ծոցը՝ Ատլանտեան ովկիանոսէն ձևացեալ :  
Մեծակիրյի ծոցը , Հունարուսաս ծոցը՝ Անդիւնուն ծովին ձևացեալ :  
Պալիքունիոյ ծոցը՝ Մեծ ովկիանոսէն ձևացեալ :  
Ամերիկայի 12 փոքր ծոցերն են .  
Ֆանտի , Տելանուր և Ջեղբէնի ծոցերը՝ Միացեալ նահանգաց արևելեան կողմը , Ատլանտեան ովկիանոսէն ձևացեալ :  
Տարանունիոյ օրենց՝ Պրազիլի արևելեան կողմը :  
Ա. Անորոնի ծոցը՝ Լա Բլաժայի հարաւային արևելեան կողմը :  
Ա. Գեորգի ծոցը՝ Բաթակոնիոյ արևելեան կողմը ,  
Երեքն ալ Ատլանտեան ովկիանոսէն ձևացեալ :  
Կուայագիւն և Բանաճայի ծոցերը՝ Գոլումբիոյ արևմտեան կողմը :  
Ա. Ֆրանչունիոյ ծոցը՝ Միացեալ-նահանգաց արևելեան կողմը ,  
Ամերիկան կողմը , Մեծ ովկիանոսէն ձևացեալ :  
142. Ամերիկայի մէջ 21 գլուխոր կողի կամ կը զեաց խումբ կայ .  
Արօնալուգիտիս՝ Ասուուցեալ ծովուն մէջ :  
Պաֆինի ծովուն հրանելը՝ Ատլանտեալ ծովուն արևմտեան կողմը :

6' Ատլանտնան Ովկիանոսին մէջ, այսինքն, Սուրբ  
Լաւրենտիոսէ ծացէն հղիները . Լոնի-Արևելու, Պէրմուտեան,  
Լուտյուտեան, Մէծ-Անդրէլեան, և Փուլ-Անդրէլեան հղիները :

7' Մէծ Ովկիանոսին հարաւակողմը, այսինքն,  
Նոր-Գերշէտ, Ֆալլէլունու կամ Մալունեան հղիները, Մա-  
չէլլան կամ Երէլ-հոյ, Աստուածածոր Արշակունյունը,  
Զէլէտ, Ժուան Յենանգել, և Կալլաբակոս հղիները :

8' Մէծ ովկիանոսին հիւսիսակողմը, Ուշիւս-Ճէկտօս  
հղիները, Բատրա և Վանդուշէր Արշակունյունը, Գոտիստ  
հղին, Ուլունեան հղիները :

Պէճինէա ծովան հղիները :

145. Ամերիկայի մէջ 6 գլխաւոր թերակղզի կայ .

Լապուտուր և Նոր-Անդրէտ կամ Աժապէտ՝ Նոր Բրի-  
տանիոյ մէջ :

Ֆլուտոն՝ Միացեալ-Նահանգաց արևելեան հարա-  
ւային կողմը :

Հարաւայն Քամէֆօրնէտ, և Եսուտառան՝ Մեքսիկոյի մէջ :  
Ալան-Ռեւիդին՝ Ուուսի Ամերիկայի մէջ :

144. Ամերիկայի մէջ 12 երնելի հրուանդան կայ .

9 ը Արևելեան կողմը ,

Ֆլուտուկ՝ Կրօէնլանտիայի հարաւակողմը .

Ուսուդէննուլ, և Ջէրլ՝ Լապրատորի մէջ .

Սապուլ՝ Նոր Սկովտիոյ հարաւակողմը .

Գանձու՝ Ֆլորիտայի հարաւակողմը .

Գարուն՝ Եսուքադանի արևելեան հիւսիսակողմը .

Ա. Ուսէտու՝ Պրազիլի արևելեան կողմը .

Ֆրօնտոր՝ Հարաւային Ամերիկայի հարաւածայրը .

Հուն-Մակեյլանի Արշապեղագոսին հարաւակողմը :

3 ալ Արևեմտեան կողմը ,

Պլանդոյ՝ Բերուի հիւսիսակողմը .

Ա. Գուկաս՝ Քալիփոռնիոյ հարաւածայրը .

Ար-Հրեւեան Քլամ՝ Ուուսի Ամերիկայի արևմտեան  
կողմը, Ասիայի արևելեան գլխանին ճիշտ դիմացը :

145. Ամերիկայի մէջ 7 գլխաւոր լեռներու գօտի կայ .

Ալէկանէ՝ Միացեալ նահանգներուն մէջ .

Ա. պատաժուածուած լեռնէ, Ալէրրա-Վէրրէ, Ալէրրա ու Լո-  
Սէմպրէ, Ալէրրա ու Լա-Մարքէ, որք հիւսիսային Ա-  
մերիկայի մէջ հիւսիսէն դէպ ի հարաւ կը տարած-  
ուին :

Անոր լեռնան երկայն գօտին, որ կը ճղուին հարա-  
ւային Ամերիկայի մէջ հիւսիսէն դէպ ի հարաւ . և  
իրենց ամենէն բարձր Ջէմպրասո կը լըսուի .

Պրաղիէլ լեռները :

146. Ամերիկայի մէջ 5 անուանի հրաբուխ կայ .

Ս. Երէլ լեռը՝ Ուուսի Ամերիկայի մէջ :

Բանանուռէ Երէլ՝ Մեքսիկոյի մէջ :

Գուլուբատուս, և Բէնդու՝ Գոլումալիոյ մէջ :

Արէլէլը՝ Բերուի մէջ :

147. Ամերիկայի 11 գլխաւոր լիճերն են ,

Հիւսիսային Ամերիկայի մէջ :

Գերեաց և Վիննիբէէ լիճերը՝ Նոր Բրիտանիոյ մէջ .

Վիելն լիճ, Միկեան, Հուրոն, Լուկէ և Օնդուրէն՝ Մի-  
ացեալ-Նահանգաց հիւսիսակողմը :

Նիէլուսկուս լէճ՝ Սիջին Ամերիկայի մէջ :

Հարաւային Ամերիկայի մէջ :

Մարտաբէնոյ՝ Գոլումալիոյ մէջ .

Դիէլէնդու՝ Բերուի մէջ .

Բանուս՝ Պրազիլի հարաւակողմը :

148. Ամերիկայի մէջ 15 գլխաւոր գետ կայ

7 ը Հիւսիսային Ամերիկայի մէջ :

Մատէնոյ՝ որ դէպ ի հիւսիս կը թափի .

Նելլն՝ Հուտսունի ծոցը կը թափի .

Սուրբ Լաւրենտիոս՝ Ատլանտեան Ովկիանոսը .

Միէսէլին՝ Ուէյ-Նորմէն՝ Մեքսիկոյի ծոցը .

Գուլուբատ կամ Օրենս՝ Մէծ Ավկիանոսը .

Գուլուբատույ՝ Գալիփոռնիոյ ծոցը .

6 ը Հարաւային Ամերիկայի մէջ :

Մարտէլանու՝ Անդիլեան ծովը .

Օրենսդ., Ամառնաց գետը, Գոհանդին, Սուրբ Յօրան-  
շէկոս և Բլտու՝ Աղջանտեան ովկիանոսը :

149. Ամերիկայի 15 գլխաւոր գետակներն են .

Մէսորէ, Օհոյ, Արտաստա, և Կոբիր գետակներ որ կը  
թափին Միսիսիպիի մէջ .

Ուժայալ, Ուժոյ-Նեկո, Մարտեր, Թօքայս, և Քահի-  
նոս՝ որ կը թափին Ամազոն գետը .

Քասիչուրէ՝ որով Օրէնօք գետը Ռիոյ Նեկո և Ա-  
մազոն գետերուն հետ հալզորդ ակցութիւն ունի .

Արտիստ, Դոգանդեն կը թափի .

Բարսիստ, Բարսիս, Բէլոօմայո, և Ուշուիստ, որովք  
կը ձևացնեն Բլտու :

### Ե. ԱՎԿԻՍԽԻԱ

150. Ովկիանիան երեք գլխաւոր մաս կը բաժնուի,  
1° Նորագիս կամ Մալենիս .

2° Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. .

3° Բալնեղիս կամ Աբելելան Ովկիանիս :

151. Դոգազիան կը պարունակէ 4 գլխաւոր կը լ-  
զեաց խումբեր, որք են, Սարէ հողիները, Զելուեն,  
Մալուեն, և Փէլուեն հողիները .

Սոնտ կղզեաց գլխաւորներն են .

Ճաշո, մայրաքաղաք՝ Պանամիս .

Սուսուրա, գլխաւոր քաղաք՝ Աշէս, Բարսիս, և Բա-  
լուալունի .

Պորնեյ, Պոլի, Սումուլա, Ֆլորէ, Սումուլա, Թէհոր .

Մոլուգեան կղզեաց գլխաւորներն են .

Ճելայ, Պուրոյ, Անբայ և Աճույն .

Փիլիպեան կղզեաց գլխաւորներն են .

Լասոն, մայրաքաղաք՝ Մանիլա .

Մինուանո, մայրաքաղաք՝ Մինուանո կամ Անդանին .

Բալուան կղզին :

Սուսուրա, կը պարունակէ Նոր Հունադ կամ Ա-  
րտիստիս :

Տէւեն կղզին, Նոր-Կունիսէս, Նոր Իրլանդա-  
նիս, Անգլիանէս կղզի, Նոր-Հերետիկանի, կամ Արչե-  
ղուան Սուրբ-Հոգոյ, Նոր-Գալիքանիս, և Նոր-Զելանդա :

152. Բոլինեղիան կը բաժնուի երկուքի, Մէրծնուշին  
և բուն Բոլինեղիս :

Մէրծնուշին կը պարունակէ, կղզիք Պանչն և Կոմ-  
բէս կամ Արշէպէլանո հակեյանէ, Մարէս Անսա, Բէլէլ,  
Գարունեն, Աբէկուշադո Անսանէ, Մէրծնուշին, և Քի-  
նուիլ կղզիներ :

Բուն Բոլինեղիան կը պարունակէ, կղզիք Սանտա-էւ-  
կամ Հալս, Մարտէլ, Նորութաց, Վէլին կամ Ֆէնի, Թօն-  
իս կամ Բարեկամաց, Ընկերունեան կամ Թանինի, և Կոչի+  
Պատէս կամ ստորին՝ որ կը պարունակէ Վնասուտ Շո-  
լու Աբէկուշադոս, և Վարունիուր Աբէկուշադոս :



### Բ.

ՄԱՍԻՍԻՈՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻ

## Ի ՎԵՐԱՅ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ

ՀԻՆԳ ՄԱՍԱՆՑ ԱՇԽԱՐՁԻ

153. Եւրոպայի սահմանն է արևելքին Ուրալ լեռ-  
ները, Ուրալ գետը և Կովկաս լեռները, միւս կող-  
մերը ծովով ըլապատած է: Եւրոպան արևմտեան եր-  
կայնութիւն 12° էն մինչև արևելքան երկայնութեան  
62° ը, և հիւսիսային լայնութեան 55° էն մինչև 71° ը,  
կը առածուի: Իր բազմամարդութիւնը 290,000,000  
և իր տարածութիւնը 9,700,000 քառակուսի քիո-  
մետր է: Թէպէտե աշխարհիս միւս մասերէն փոքր է,  
բայց ամենէն աւելի քաղաքականացեալ և համեմա-  
տաբար աւելի բազմամարդ է:

## ՏԵՐՈՒԹԻՒՆՔ ԵՒՐՈՊԻԱՅԻ

Ա. ԲՐԻՏԱՆԻԱ

**154.** Անգլիան, Որ երբեմն բրիտանիա կը սուէր, Հռովմայեցաց ձեռք անցաւ Փրիստոսի 78 թուականին որոնք 558 ին ձգեցին : Բրիտանիացիք Արտօվտիացւոց ձեռքէն նեղութիւն քաշելով Անկլօ-Ռաքսոն ըսուած ազգէն օդնութիւն ուղեցին, որոնք բոլոր երկրին տիրելով, անունը իրենց գլխաւորին անունով Անգլիա զրին : 1066 ին Նորմարդիոյ Գուլիէլմոս գուքսը տիրեց Բրիտանիոյ, և Նորմանդիայէն բնակիչներ բերաւ, ասկէ ետքը Անգլիան երթալով մեծաւ և ըսուեցաւ Մեծաբար Անգլիան մէծին բրիտանիոյ :

**155.** Բրիտանիան Եւրոպայի արևմտեան կողմնէ, և ամեն կողմը պատած է Ալլանտեան ովկիանոսը : Իր բազմամարդութիւնը 50,000,000, և իր տարածութիւնը 504,000 քառակուսի քիլոմետր է : Չորս գլխաւոր մաս կը բաժնուի, Անգլիա, Սունդիա, Իռլանդիա, և քոփի Մանթ Կուները : Երկիրը ընդհանրապէս լեռնոտ է, մանաւանդ Ակովտիան ու Կալիսի գաւառը : Գլխաւոր գետերն են Թամի, Ուլֆեր, Շենք, Ուշ Թրէնի, Թուեր, որ Անգլիան Ակովտիաէն կը զատէ : Կիման ցուրտ և խոնաւ է, անոր համար խաղող չի հասցնէր . Բայց ցորենը և խոտը առատ է : Զին և ոչխարիներուն բուրդը շատ ազնիւ է : Երկաթ, կապար, անալ, պղինձ և հանքածուխ առատութեամբ կը դանուի հոս : Բազմաթիւ ջրանցները, մանաւանդ Երկաթովդիները այս հարուստ երկրիս վաճառականութեանը շատ նպաստած են : Երկրածործութիւնը ճարտարութիւնը վերջին ծայր կատարելութեան հասած է, իրենց ձեռագործերը շատ անուանի են և վաճառականութեամբ բոլոր աշխարհի հետ յարաբերութիւն :

ունենալով, այսօր բոլոր աշխարհիս հարստութեան կեդրոնն ու աղբէւրը Անգլիա եղած է : Կրօնքն է Անգլիոյ մէջ Եպիսկոպոսական և Ակովտիոյ մէջ Երիշական բողոքականութիւն, իսկ Խուանատայի մէջ Հռոմէականութիւն : Կառավարութիւնը՝ սահմանադրական Միապետութիւն :

Անգլիոյ գլխաւոր քաղաքներն են :

**Լոնդոն.** (5,000,000 բնակիչ) Տէրութեան մայրաքաղաքն է, Եւրոպայի ամենէն բազմամարդ և բոլոր աշխարհիս մէջ ամենէն վաճառաշահ քաղաքն է, իր նաւահանգստին մէջ շատ անգամ 2,000 նաւէն աւելի կը գտնուի : 12 Փլամիշթը երկայնութիւն և 6 Քիլօմետր լայնութիւն ունի : Երկելի շնչերն են Ա. Պազարի Եկեղեցին՝ աշխարհիս մէջ բողոքականաց ամենէն մեծ և ղեղեցիկ Եկեղեցին է, Վեսթմինիսթրի Եկեղեցին, ուր թագաւորաց և մեծ մարդկանց գերեզմանները կան : Բարլամենթին պալատը, կամուրջները, գետափունքը և մանաւանդ Թամիզ գետին տակի մեծաղործ ձամրան որ 1300 սոք երկայնութիւն և 200 սոք լայնութիւն ունի : Այս բազաքս Պարոնի, Միլանի, և Փոփի հայրենիքն է : Նեվսոն ալ իր կենաց մեծ մասը հոս անցուցած է և իր մարմինը վեսթմինիսթրի Եկեղեցին է :

**Մանչեսթր.** (365,000 բնակիչ) և Պէտինիամ (255,000 բնակիչ) Լոնտրայէն ետքը այս երկու քաղաքները շատ անուանի են, մանաւանդ իրենց ձեռագործներով ու մետաքսեղնի ու բամպակեղնի և երկաթեղնի գործարաններով :

**Լիվընուլ.** (492,000 բնակիչ) Մերսեյ գետին բերանը, իրանտայի ծովուն մօտ, իր ծովային վաճառականութիւնը անհուն է :

Ուրիշ Երկելի քաղաքներն են Պրենիլ (166,000) Բերման (95,000), Հելլ (99,000), Բիլին (62,000), Կլ :

Ակովտիոյ Երկելի քաղաքներն են :

Ապէճուրի (170,000), Կլէսկա (441,000), Տնորի (90,000), Քորի (79,000), Լէմելի (45,000), ևայլն :

Խրանտայի երկելի քաղաքներն են :

Տըրին (250,000), Քորի (80,000), Լէմելի (45,000), ևայլն :

Բրիտանիոյ մաս եղած կղզիներն են :

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Շենքուր, Որիութեան և Հերբիլեան կղզիները . Խրանտայի ծովուն մէջ՝ Հենդլանդ . Մանչի մէջ՝ Ուայթ, Կերուս, և Ճերուս . Միջերկրական ծովուն մէջ՝ Մալթա :

Անգղիոյ Եւրոպային դուրս ունեցած երկիրներն են :

1° Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ մեծ կառուր, Այշ-լան կղզին, Պիրամանի երկրին քանի մը գտաւոները . Մալթա, Անհողուր կղզին, Հնդ-Քոնի կղզին՝ Չինու մէջ և Արեն՝ Արարիոյ մէջ : Ընդամենը (146,000,000 բնակիչ) :

2° Ափրիկէի մէջ՝ Կամպիոյի մէկ մասը, Աէրու-լյանէ, Բարեյուրու ժլուե, Սու-բն Հեղինե կղզին ուր մեծն Նարութին աքսորուեցաւ 1815/ն և մինչեւ իր մահը հոն մնաց, և Վէրապինան կղզին և ուրիշ շատ մանր կըզ-զիներ, (1,200,000 բնակիչ) :

3° Ամերիկայի մէջ՝ Կրենլանդիայի հիւսիսային կողմը, Կոր Բրիտանիա, Եւրոպանեւ մէկ հորու, Կոոյանույի մէկ հորու, Պատին ծովուն հայները, Ս. Լամբենդուսի ծո-վին հայները, Պերուարտան հայները, Լամբայեան հայները, Ամայիս կղզին, Փորի Անդի լուն կղզիներուն մեծ մասը (4,800,000 բնակիչ) :

4° Ուկիանիայի մէջ՝ Նոր Հունարա, Վան Տեղն (1,440,000 բնակիչ) :

Անգղիացւոց ձեռքն է նաև Ճեռուկուր քաղաքը, (17,000) Սպանիոյ արևմտեան ծայրը .

Մահօլունին . Անդղեցիք ունի ճը ուրիշն է մը ու նոր հասուաստունիներ կընեն զնաւողն երիբներու մէջ և իւսուս-քուս Նոր-Գելենիք մէջ :

### Բ. ՏԱՆԻՄԱՐԴԱՅԱ.

156. Տանիմարդան, որոյ ցամաքային մասը երբեմն Կիմբրեան ֆերսոնիսոն ալ կըսուէր, Կիմբրացւոց հայրենիքն էր, որ Քրիստոսէ 100 տարի առաջ բոլոր Եւրոպա կոփեցին : 855 էն սկսեալ մինչեւ 1042 Անգղիոյ վրայ շատ անգամ յարձակեցան և միայն 25 տարի հոն կրցան մնալ : Տանիմարդան ինքնագլուխ միապետութիւն է : 8 Տարի առաջ Աւստրո-Բրուսիայ դէմ պատերազմի քունուելով կորսնցուց Կիմբրեա թերակըզւոյն հարաւային մասը, այսինքն, Շլեսվիկը, Հուլցմայնը և Լաւենսպուրկը : Հիմա ամիսոփուած է Եպուլանտի, որ է յիշեալ թերակըզւոյն հիւսիսային մասը, և Դանեաց Արցիպեղագոսին մէջ :

157. Տանիմարդան 1,800,000 բնակիչ և 58,000 քաւակուսի քիլոմէթր տարածութիւն ունի, իր սահմանը հիւսիսին քամեկաթի ծոցը, արեւելքէն Պալթիի ծովը հարաւէն գերմանական գաղնակցութիւնը և արեւմուտքէն հիւսիսային ծովը է : Երկիրը գաշտային և անքեր է, միայն մին անուանի է :

Կլիման ցուրտ և խոնաւ է, Պալթիկ ծովուն մէջ Տանիմարդայի կղզիները բարեկեր և բազմանարդ են : Կրօնքը Լուտերական բողքականութիւն է . Կառավարութիւնը Սահմանագրական միապետութիւն :

Տանիմարդայի երեւելի քաղաքներն են .

Քոբէնհան (1,550,000 բնակիչ) տէրութեան մայրաքաղաքը Զելենիոր (8,000), Աուլուրի, Աուրուելու, Ֆրեյրեքիս և Օդենս :

Տանիմարդայի կղզիներն են .

Ջալթիկ քաղաք են նաև Հելենիոր (8,000), Աուլուրի, Աուրուելու, Ֆրեյրեքիս և Օդենս :

լաւագութ, Յաւանելը, Պոբնհալը, Աւտանտեան ովկիսանոսին  
մէջ իւլանոս և մէրժէր կղզիները:

Տանիմարդային Եւրոպայէն դուրս ունեցած եր-  
կիրներն են.

Ամերիկայի մէջ՝ Կրօնլանդ, Սուբբ Թուշտա, Սուբբ  
Յունանէս, և Սուբբ Խոռ կղզիները: Կուսանաց հաներէն  
փոքր անդիլեանց խումբը (55,000 բնակիչ):

#### Դ. ՇՈՒԾՑ

158. Շուէտի մէջ առաջ կը բնակէին Ֆինք, որոց  
ցեղը տակաւին կայ Շուէտի և Ռուսիոյ հիւսիսային  
ծայրը Լաբոնիայի մօտ, ետքը Գոթացիք առին: Իսկ  
Նորվեկիան ատենով Տանիմարդայի Կատրն էր, 1814  
ին Շուէտի տէրութեան հետ միացաւ: Հիմա կառա-  
վարութիւնը Սահմանադրական միապետութիւն է և  
կրօնքը Լուտերական:

159. Շուէտի սահմանն է հիւսիսէն Սառուցեալ ծո-  
վը, արևելքէն Ռուսաստանը, հարաւէն Պալմիկ ծո-  
վը, արևմտաքէն Աւլանաեան ովկիանոսը: Շուէտը  
երեք գլխաւոր մաս կը քածնուի, Բուռ Շուէտ, Նոր-  
վէկա և Կողները: Տարածութիւնն է 758,000 քառա-  
կուսի քիլոմէթր և բնակիչը 5,800,000: Նորվեկիան  
լոռներով բաժնուած է, և Շուէտի մեծ մասն ալ լի-  
ճերով ծածկուած, Կիման ցուրտ և հողը քիչ բարե-  
բեր է: Երկաթի, պղնձի, արծաթի հանք ունի.  
փայտը խիստ շատ է. հիւսիսային կողմը շատ կը գլու-  
նուի եղնիկ, որ Լաբոնիայի գլխաւոր հարստութիւ-  
նըն է, և ուրիշ մուշտակ ունեցող կենդանիներ:

Շուէտի գլխաւոր քաղաքներն են.  
Անոնց (155,000 բնակիչ) Մելարն էնին մէջ քանի  
մը մանր ու մեծ կղզիներու և երկու թերակղզիի  
վրայ գեղեցիկ կերպով շինուած տէրութեան մայրա-  
քաղաքն է, որ աղէկ ձեռագործ, ուսումնական տե-  
ղեր, և բանուկ վաճառականութիւն ունի:

Կոնցուուրէ, Քարլութինա, Ուբառլը, և այլն:  
Նորվեկիայի գլխաւոր քաղաքներն են.  
Քրիստոնէան (66,000 բնակիչ) տախտակի, Երկաթի  
վաճառականութիւն ունի, համալսարանը անուանի է:  
Պէտէն, Բեռնո, Վարդնուս, և այլն:  
Շուէտի տէրութեան վերաբերեալ կղզիներն են.  
Պալմիկ ծովուն մէջ՝ Կոնցուուր, Օլանդ, և Սառուց-  
եալ ովկիանոսին մէջ Լոֆթուրն կողները, ասոնց քովե-  
րն է Մալմէրէ ըսոււած սոսկալի յործանքը՝ որ շատ  
անգամ նաւեր կընկղմէ, որոյ ձայնը մղոններով հեռու  
լը լսուի:

Շուէտը Եւրոպայէն դուրս ունի միայն Սուբբ Բար-  
բուռներու կղզին յարեւմեան Հնդկիս, որ փոքր Ան-  
թիլեան կղզեաց մին է (10,000 բնակիչ):

#### Դ. ՌՈՒԾԱՆ

160. Ռուսի թագաւորութիւնը 900 ին ատենները  
ակսաւ և բարբարոս ազգ մէկը, բայց մեծն Պետրոս,  
որ 1700 ին սկիզբները Ռուսաց կայսր եղաւ, տէրու-  
թիւնը շատ ընկարածակից, և քաղաքականութեամբ, ար-  
ուեստով և ուսմամբ յառաջացուց: Ետքը Ենաստանի  
մէկ կառը և ուրիշ երկիրներ ալ միացաւ. Հին ատե-  
նը Ռուսից բնակիչներն էին Սկիւթացիք, Սլաւեանք,  
Սարմատացիք ու Ֆինլանտացիք, հիւսիսի կողմը կը  
Սարմատացիք ու Սամոյետ ըսոււած կարճահասակ  
գտնուին Լաբոն ու Սամոյետ ըսոււած կարճահասակ  
գողովուրիները: Կառավարութիւնը բացարձակ միա-  
պետական է, կրօնքը արևելեան եկեղեցի:

161. Ռուսաստանի սահմանն է հիւսիսէն Սառուց-  
եալ ծովը, արևելքէն Ռուսի Ասիան, հարաւէն Սեւ-  
եալ ծովը, արևմտաքէն Ռուսի Ասիան, արևմտաքէն Բրուսիան. Պալ-  
միկ ծովը ու Շուէտը: Տարածութիւնն է 5,870,000  
քմէթրը քառակուսի, և բնակիչը 70,000,000: Եր-  
շիլոմէթրը քառակուսի գալուային է, մէջէն անցնող քի-

լեռ ունի , որոնք շատ բարձրութիւն չունին , միայն  
իր սահմաններուն վրայ Ուրալ և կովկաս լեռանց գու-  
տիները կան : Հիւսխացին կողմերուն հողը անբեր ու  
քիչ մշակած է , իսկ միջին ու հարաւային կողմերը  
խիստ պողաբեր : Գլխաւոր բերքն է երկաթ , կապար ,  
սղինձ , արծաթ , բլատին , ոսկի՝ որ Ուրալ լեռներէն  
կենէ : Շատ անտառներ ունի , ցորենդ առատ ու աղ-  
նիւ է , մորթը , կաշին և մուշտակները խիստ ընտիր :  
Այս երկրին հիւսխացին կողմը և Սառուցեալ ովկիա-  
նոսին անբնակ կղզիներուն մէջ նշանաւոր է ճերմակ  
արջը :

Ուռուսիոյ գլխաւոր քաղաքներն են .

Ս. ԲԵՆԴՐԱՊՈՒՏԻ . (583,000 բնակիչ) Մեծն Փետրոս  
շինեց այս մայրաքաղաքը նեվա գետին բերանը 1703  
ին , ուր կայ իր սրբածէ ծիւաւոր արձանը կրանիս քա-  
րի ժայռի մը վրայ տնկուած 1,500,000 բիլօկրամ ծան-  
րութեամբ : Եւրոպայի մայրաքաղաքաց մէջ ամենին  
աւելի ասոր տեսքը փառաւոր է , փողցներուն լայ-  
նութեանը և շակութեանը , հրասարակներուն ըն-  
դարձակութեանը , գեղեցիկ կրանիսէ գետափանցը և  
պալատներու ու հասարակաց և մասնաւորաց չէնքե-  
րուն ազւորութեանը պատճառաւ : Լազարեան Պա-  
րոնները հոս չայոց համար գեղեցիկ եկեղեցի մը շի-  
նած են , ատենով ալ մեր լեզուովը շատ գրեթ տըպ-  
ուած են աս քաղքիս մէջ :

Ա. Ա. Ա. (400,000) Ուռուսի առջի մայրաքաղաքը ,  
1812/ի Գաղղիացիք առին , որուն մեծ մասը Ուռուսերը  
այրած էին , բայց ետքերը աւելի մասուաւոր շինեցին :  
Ուռուսի կայսերը հոս թագ կը դնեն : Երևելի է Քրեմ-  
լին թագաւորական պալատը և Վայր եկեղեցին : Ան-  
ուանի է Լազարեան իշխանաց հոս հիմնած Հայկազ-  
նեան վարժարանը , Մոսկուա երկաթուղիով միացած  
է Բեթրսպուրկի հետ :

Ուրիշ երևելի քաղաքներն են ,

Վարչովիտ , Օրենստ , Ոչկա , Քէէլ , Ա. Բ. Ա. Ա. , Քա-  
շն , Քընչընտ , Ա. Հ. Ա. Ա. Ա. Ա. , և այլն :

Ուռուսի տէրութեան վերաբերեալ կղզիներն են .

Սառուցեալ ովկիանոսին մէջ՝ Սպիտիւրէն , Նոր Զէմլա ,  
Վայկաց , Քալիսայէլ , Պալթիկ ծովուն մէջ՝ Ալսու , Տա-  
կո , Էօչէլ :

Ուռուսիան Եւրոպային դուրս ունի Ասիոյ մէջ՝  
Ալբանիան , Եւրոպան , Խերեն , Ա. Պ. Ա. , Զերէ-  
տարանին մէկ հարը և Սիերէն (7,000) 000 բնակիչ :

Ամերիկայի մէջ՝ Աստուկ Ա. Ե. Է. Ա. Ա. որ հիւսիսի ծայրն  
է (50,000 բնակիչ) :

### Ե. ԳԱՂՎԻԱ

162. Գաղուէն 300 տարիի չափ Հռովմայեցւոց տա-  
կըն էր , Ե. Գարուն ատենները Գերմանիային Ֆրանք-  
ները եկան տիրեցին և անկէ ետքը իրենց անուն Ել  
ֆրանսա ըսուեցաւ : Առաջին թագաւորն էր Ֆարա-  
մանտ , Տէրութիւնը ծաղկեցնողն էր մեծն կարուս :  
1792/ին Մեծ Խոսովութիւն մը հանելով թագաւորու-  
թիւնին փոխեցին Հասարակապեառութիւն ըրին .  
1804/ին մեծն Նարուկոն կայսր եղաւ , և 1815/ին  
քուելով Գաղղիա նորին թագաւորութիւն ունեցաւ .  
1850/ին նոր խոսովութիւն մը ետքը՝ Սահմանադրական  
թագաւորութիւն հաստատեցին . բայց 1848/ին թա-  
գաւորնին փախցնելով նորին հասարակապեառութիւն  
ըրին , որոյ նախագահ ընտրուեցաւ Լուդովիկոս Նա-  
բուէն , որ երեք տարիէն ետև 1851/ին ինքզինքը  
կայսր հրատարակել տուաւ Նարուկոն Գ. անուածիք :  
1870/ին Բրուսիոյ գէմ պատերազմ հրատարակելով  
յաղթուեցաւ գերի մնաց Բրուսիացւոց մեռքը և 20  
տարի փառաւոր կայսրութիւն ընելէն ետքը ազգը  
զինքը աթոռէն անկեալ հրատարակեց : 1871/ի Դաշ-  
նադրութեամբը Գաղղիան իր երևելի նահանգներէն

Ալզաս և Լորէնի մէկ մասը կորսնցուց , որոնք բրուսիոյ կառավարութեան անցան , այս նահանգները 1,500,000 ժողովուրդ և 16,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն ունին : Հիմա Գաղղիա Պ. Թիերի նախագահութեամբը ազգային առժամանակեայ ժողովը մը կը կառավարուի : Իր կառավարութեան ձեր թէե տակաւեին անորոշ է , բայց աւելի հասարակական է :

Ազգին կրօնքն է Հոռովհական եկեղեցի :

165. Գաղղիոյ սահմանն է հիւսիսին Պելճիա , Հունատա ու Բրուսիա , արևելքին Գերմանական դաշնակցութիւն , Զուիցցերի ու Սարտենիա , հարաւէն Միջներկական ծով ու Սպանիա , արևմուտքէն Ատլանտիան ովլիհանոս և Մանչ : 1871 ի դաշնադրութենէն առաջ Տարածութիւնն է 545,000 քիլոմէթր քառակուսի , բնակչը 58,000,000 , բայց հիմա տարածութիւնն է 527,000 քիլոմէթր քառակուսի և բընակչը 56,500,000 :

Երկրին արևելքան ու հարաւային կողմերը լեռնոտ են , իսկ հիւսիսային ու արևմտեան կողմերը դաշտային , կլիման բարեխառն ու առողջ է , հիւսիսային կողմը ցուրտ : Երկքն է Երկաթ , պղինձ , հանքածուխ . հողը խիստ աղէկ բանեցուցած է , ձիթն ազնիւ , գինին խիստ անուանի , մանաւանդ Շամբանեա ու Պորտոյ գաւառներուն զինիները , կենդանիներն ալ ընտիր են , մանաւանդ եղներն ու ոչխարները :

Մշակութիւնը , արուեստները և ձեռագործը մեծ կատարելութեան մէջ են , ուսմունքը և գիտութիւնը վերջին ծայր կատարելութեան հասած են , բայց վերջի պատերազմն հասկցուեցաւ որ , գաստիարակութիւնը ժողովրդեան մէջ ընդհանրացած չէ : Երկաթուղիք երկրին ամեն կողմը տարածուած են :

Գաղղիոյ գլաւաւոր քաղաքներն են .  
Փարէւ . (2,000,000 բնակիչ) մայրաքաղաքը՝ Սէն գե-

տին վրայ աշխարհիս մէջ առաջին ծաղկած քաղաքն է . լր Մէտապոտն է 55 քիլոմէթր . Երկաթուղիներով գելճիքայի , բրուսիայի , Գերմանիոյ հետ միացած է : Հասարակաց չինքերը , պարտէզները , ուսումնական թանգարանները , ամենն ալ շատ փառաւոր են . համալսարանը աշխարհիս մէջ մէկ հատիկ , թագաւորական զրատունն ալ ամենէն հարուստն է : Հոս մեռաւ մեր Ուուբինեանց վերջին թագաւորը Լեոն Զ. 1591 ին . և հոս հաստատուած է մեր ազգային Մուրատեան վարդարանը 1845 ին , բայց 1870 ի պատերազմի ատենէն ի վեր գոցած են :

Ուրիշ երևելի բաղաքներն են ,

Լին , Մարտիլլա , Պուրոյ , Ռուտան , Նանդ , Գուլբեն , և այլն :

Գորսիքա կղզին ալ Գաղղիացոց ձեռքն է և ասոր մէջ անուանի է Այասէօ քաղաքը , ուր ծնաւ մեծն Նարուլոն :

Սավոյաի մէկ նահանգը և Նիսի կոմսութիւն ալ 1860 ին միացան Գաղղիոյ . (745,000)

Գաղղիոյ Եւրոպային դուրս եղած Երկիրներն են .

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ կորչը , գլխաւոր քաղաքը Բնակիլէւէ (229,000 բնակիչ) : Ա. Փրիկէի մէջ՝ Ճեղաշուշի կամ Ալճէրէ , Անենկալին մէկ կտորը Կոբէա և Պուրապն կղզիները (5,000,000 բնակիչ) : Ա. մերիկայի մէջ՝ Սուրբ Վերոնա և Միեւլն կղզիները . Սուրբ Լարենտիոս ծոցին մէջ՝ Կուստուլ-Բէտ և Կույանա Գաղղիական (500,000 բնակիչ) : Ովկիանիսի մէջ՝ Մարտիլլ կղզիները , Գայէնի և Նոր Գուլբենները (80,000 բնակիչ) :

—

Զ. ՊետքիթԱ.

164. Պելճիքան երկար ատեն Աւստրիոյ կայսերաց ձեռքն էր , անցեալ գարուն վերջերը Գաղղիացիք առին , բայց 1814 ին զատ թագաւորութիւն եղաւ ,

որ Հոլանտային հետ Սբորին Նահանդաց Տէրութեան կըսուուէր : 1850 ին Պելճիքան Հոլանտային բաժնուելով առանձին թագաւորութիւն եղաւ : Կառավարութիւնն առանձին միապետութիւն : Կրօնքը՝ մեծ է Սահմանադրական միապետութիւն : Վաղ մեջ Սահմանադրական վեղունին զաղղիարքն և ֆլաման, որ Գերմանիերէնի մէկ տեսակն է :

165. Պելճիքայի սահմանը հիւսիսին Հոլանտան է, արևարեւելքէն գերմանիան, հարաւէն գաղղիան և արևարեւելքէն գերմանիային ծովը : Տարածութիւնն է 29,500 մուտքէն հիւսիսային ծովը : Տարածութիւնը 5,000, քիչօմիթը քառակուսի, բազմամարդութիւնը 5,000, 000 : Երկիրը դաշտային է, քանի մը լեռներ միայն 000 : Երկիրը գաղտային է, բայց կամ է երկաթ, հանքածուխ, արեւելեան կողմը կան : Բերքն է երկաթ, հանքածուխ, արմատիք, աղէկ ձեռագործ : Երկաթուղիներն փայտ, արմատիք, աղէկ ձեռագործ : Երկաթուղիներն ալ շատ են :

Պելճիքայի գլխաւոր քաղաքներն են .

Պէտքէն (200,000 բնակիչ) մայրաքաղաքը Էսքոին հազորդուած ջրանցքին վրայ շինուած է, ասոր արեւելեան հարաւային կողմը 15 քիչօմիթը հեռու Վաւելեան գիւղն է ուր մեծն նաբոլէոն յաղթուեցաւ թերլոյ գիւղն է ուր մեծն նաբոլէոն յաղթուեցաւ թերլոյ գորքերէն 1815 ին :

Դաշնակից զօրքերէն 1815 ին :  
Կանոր, Անվերս, Պէտքէ, Լէքէ, Նամուր, ևայլն :

### Ե. ՀՈԼԱՆՏԱ

166. Հոլանտացիք Սպանիացւոց տակն էին, 1579 ին խոռվաթիւն մը հանելով զատ հասարակակետութիւն եղան շատ ճարտար և հարուստ : Անցեալ դարուն եղան շատ ճարտար և հարուստ : Անցեալ դարուն վերջերը Գաղղիացիք յաղթեցին, բայց 1815 ին Հովերջերը Գաղղիացիք յաղթեցին, բայց 1815 ին Պելճիքան ի միասին թագաւորութիւն մը լանտան ու Պելճիքան ի միասին թագաւորութիւն մը լանտան Սբորին Նահանդաց Տէրութեան անունով, և 1850 ձեւացան Սբորին Նահանդաց Տէրութեան անունով, և 1850 իրարմէ զատուեցան : Կառավարութիւնը Սահմանին իրարմէ միապետութիւն, կրօնքը բոլոքական միապետութիւն, կրօնքը բոլոքական մատրակական միապետութիւն : Հոլանտական կուսական մասն մաս են :

167. Հոլանտային սահմանը հիւսիսին ու արևարեւելքէն հիւսիսային ծովին է, հարաւէն Պելճիքան արեւելքէն գերմանիա : Տարածութիւնն է 53,000 քիչօմիթը քառակուսի, բնակչութիւնը 5,760,000 : Երկիրը ընդհանրապէս ծովին ցած ըլլալուն համար մեծամեծ թումբեր շինած են ջուրը բանելու : Ողը խոնաւ, դուժիսական և անտառողջ է : Հովը ցած ու ջրոս ըլլալուն՝ խիստ պտղաբեր չէ : Բերքն է հանքածուխ, կրտաւ, կաշի, կարմիր ներկ ու աղէկ ձեռագործ : Խիստ ընտիր են կովերն ու ոչխարդները, և անոնց պանիրը : Շատ երկաթուղիներ ունենալով վաճառականութիւնը շատ ծաղկած է :

Հոլանտայի գլխաւոր քաղաքներն են .

Հայէտ (88,000 բնակիչ) հիմնկուան մայրաքաղաքը Հիւսիսային ծովուն մօտ Հոլանտայի էն գեղեցիկ քաղաքն է :

Անդեւրուամ (269,000 բնակիչ) հին մայրաքաղաքը, մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի, ատենով հոռտեղի Հայոց տալարանը անոււանի էր :

Անդեւրուամ, Անդեւրու, Լէյտոն, Հարլէմ, ևայլն .

Հոլանտայի կզզիներն են .

Գույադերէի ծոցին մէջ հիւսիսի կողմին վրայ գըրեթէ կզզիներու շղթայ մը ծածկակ է, որոց գլխաւորն է թէտքէն :

Ջելնուէ նահանդէ Լուսո և Մէու գետերուն բերանս ներին ձևացած կզզեաց խումբ մըն է :

Հոլանտացւոց Եւրոպային դուրս ունեցած երկիրն են .

1° Ավրիիկէի մէջ՝ Սուրբ Գեորգ, հիւսիսային կուին էւային մէջ : 2° Ամերիկայի մէջ՝ Կույանայի մէկ կատրը, Բարբարէիս Քլուն, Սուրբինամ գետին վրայ : Սուրբ Մարտիրոս կղզւոյն արեւելեան հարաւային մասը Սուրբ Եւսուստիւս և Քուրտաստ կղզիները, որ վոքքը Սնդիկեան կղզիներուն քովերն են . Քուրտաստօի մօտ Պօհեց և

Արեւադա : 5° Մալիզիայի մէջ՝ Առաքորչա կղզին մէկ մեծ մասը , Պատշա ու Պոլիտան կղզիները , Ճառա կղզին մէկ Կտորը՝ մայրաքաղաքը Պատմական , Փուր Մոլուգան կղզիները , և Ամպայա կղզիները : (20,000,000 բնակչութեան)

Բ. ԶՈՒԽՑՅԵՐԻԱԼ

168. Զուխցէրին ատենով Հելլեստիա կըսուէր : Այս երկրին բնակիչները միշտ իրենց քաջութեամբը անուանի եղած են : Յուլիս կեսարի ատեն Հռովմայեցոց տակն էին , եաքը Գաղղիացոց անցաւ , ետքն ալ Գերմանիոյ հետ միացաւ , 1508 ին զատ հասարակագետութիւն եղան , որոյ վրայ Նարովոն ալ մէկ քանի նահանգներ առելցուց : Հիմա 1815 էն ի վեր կառավարութիւննին է հասարակապետութիւն 22 նահանգի որ իրարու դաշնակից են , ու զատ զատ կառավարութիւն ունին : Փանի որ ընդհանուր ժողով չըլլար , բոլոր հասարակապետութեան գլխաւոր կառավարութիւնը խորհուրդ կը կազմէ այս երեք քաղաքներուն մէջ Յուրիք , Պէրնա , Լուչերնա :

169. Զուխցէրին սահմանը հիւսիսին Գերմանիան է , արևելքին Աւստրիան , հարաւեն Իտալիան , արևմուտքին Գաղղիան : Տարածութիւնն է 390,000 քիլոմէթր քառակուսի , բնակչութեան 2,500,000 : Կրօնքը՝ մեծ մասը Բողոքական և մնացածը Հռովմէական . Երգունին տեղ տեղ Գերմաներէն , և տեղ տեղ Գաղղիարէն : Կիման ընդհանրապէս ցուրտ է , բայց առողջ , Հողը շատ բարեբեր ու աղեկ մշակած է : Շատ հանքային ջուրեր ունի , գետեր ալ կան որ աւազնին սակով խառն է : Բերքն է կտաւ , արմոփք , մոմ , ընտիր են կովերն ու ոչխարները , և մանաւանդ ձեռագործները :

Զուխցէրիի գլխաւոր քաղաքներն են ,  
Ճինչլեռ (41,000 բնակչութեան) ամենէն երևելի քաղաքն

է նոյն անունով լիճին վրայ իրոն գետին ելած տեղը : Զեւագործները , մանաւանդ ժամացոյցը և ուրիշ ուսկիէ ու արծաթէ բանուածները շատ յարգի են : Պաղելի կամ Պալ (53,000) , Բէնի վրայ երկրին ամենէն վաճառաշահ քաղաքն է : Կըսեն թէ թուղթ չենելու արհեստը հսկ գտնուած է :

Լուկանիա . (8,500 բնակչութեան) , այս քաղաքին քովերը ահագին առիւծ մը կայ լեռան մը կտորէ փորած հին ատենէ ի վեր :

Պերնա , Յուրիք , Լուչերնա , Շամբառալ , Նեոլանել , Ալբորժ , Սէն , և այլն :

Բ. ԱԽՍՏՐԻԱԼ

170. Աւստրիոյ կայսերութեան մէջ երկիրներ կան , որոնք առաջները կըսուէին Ուենէ , Նօրիքը առաւ , անունը Աստրիք դրաւ որ կը նշանակէ արևելքան երկիր , իր տէրութեան այսինքն Գաղղիոյ և Գերմանիոյ արևելքան դին ըլլալուն համար . Աւստրիոյ կայսերը որ 1860էն առաջ Գերմանիոյ կայոր էին , մեծն կարողուին և Հռովմի կայսերութեանց յաջորդը կը համարուէին . 1500 ին Մամառաց և Պոհեմիոյ թագաւորութիւնները իրենց երկրին միացուցին : 1772 ին Լեհաստանէն կալցիան իրենց բաժին ինկաւ : 1814 ին Լիւրիւէն , Տալմացիան , Լոմպարտիան և Վենետիկը իրենց եղաւ : Բայց 1859 ին Լոմպարտիան և 1866 ին Վենետիկը պատերազմաւ կորուսին և Սարտենիոյ միացաւ : Նոյն տարին Աւստրիան Գերմանական դաշնակացութեան մաս ըլլալէ դադրեցաւ , որ առաջ անոր զըլւսը կը համարուէր :

Կառավարութիւնը Միապետական է , կրօնքը Հռովմէական բայց տեղ տեղ արևելքան եկեղեցիի հետեղը և բողոքական ալ կայ :

171. Աւստրիոյ սահմանն է հիւսիսէն Բրուսիան և Լեհաստանը, արևելքէն Ռուսաստանը և Մոլդավիան, Հարավէն Պոնիան, Սէրգիան, Աղբիական ծովը և Խտալիոյ տէրութիւնը. արևմտաքէն Բէմօնթէի նահանգը ու Պաւիերան : Տարածութիւնը 625,000 քիլոմէթր քառակուսի, բնակչը 56,000,000, որոց լեզուն տեղական գերմաներէն, խտալերէն, Ալավերէն ու Մածառերէն է : Երկրին մեծ մասը լեռնոտ և բարերեր է : Կլիման ընդհանրապէս բարեխտառն և առողջ է : Ինքնէ երկաթ, պղինձ, կապար, աղլ : Մաճախտանի մէջ ոսկիի հանք ունի, որուն նմանը ուրիշ տեղ չիկայ, շատ արծաթ ու սնդիկ կիւնէ Աւստրիայէն, անուանի շատ արծաթ ու սնդիկ կիւնէ Ավստրիայէն, Պոհանիոյ ապակին : Քաղաքականութիւնը, ճարտարութիւնը և վաճառականութիւնը այս վերջի տարիներուս մէջ շատ առաջ գացած են, ինչպէս նաև երկաթուղիները :

Աւստրիոյ կայսրութիւնը 11 դլիմաւոր մասի կը բաժնուի . այսինքն .

1° Արշիդքսութիւն Աւստրիոյ, որոյ դլիմաւոր քաղաքներն են,

Վենետ. (600,000 բնակիչ) մայրաքաղաք, Գերմանիոյ աւելի մեծ քաղաքն է : Երկու անգամ տաճկի պաշարմանը դէմ կեցած է 1529 ին, 1685 ին, բայց 1809 ին Գալլիացիք տոփին : 1814 և 1815 ին Տէրութեանց ժողովները հոս եղան, ուր որոշուեցան Եւրոպի կառավարութեանց սահմանները : Անուանի է պայի կառավարութեանց գինարանները, թանգարակայսերական գրատունը, զինարանները, թանգարաննը, համալսարանը և ուրիշ ուսումնական տեղուաննը, հոս է Միլիթարեանց հայոց վանքը որ Թրեստէն քը : 1811 ին հոս փոխադրուած է :

1.ից, Սալցբուրի, ևայլն :

2° Խոթիրիա, դլիմաւոր քաղաք՝ Կրոս :

3° Լիւրիկէ, դլիմաւոր քաղաքները Լուստրոն կամ Լուստրի, Թրէնուր, ևայլն :

4° Թիրու գլիմաւոր քաղաքները՝ Ինոբրէն, Պէտուն, Թրէնի, ևայլն :

5° Պոհեմիա գլիմաւոր քաղաքները՝ Բրախ, ուր 1866 ին Բրուսիոյ գաղաքներութեամբը Աւստրիան Գերմանական դաշնակցութեան մաս ըլլալէ դադրեցաւ : Բայց լինուելու, Քուտքէնուելու, Սառուս, ուր Աւստրիան Բրուսիայէն յաղթուեցաւ 1866 ին :

6° Մորավիա . գլիմաւոր քաղաքները՝ Պէտա, Բրաչնյա, Օլիմպ, ևայլն .

7° Կալիցիա . գլիմաւոր քաղաքները՝ Իւլիւ, Գլըտիունի, Պրօրէ, ևայլն :

8° Մաճառստան . գլիմաւոր քաղաքները՝ Պուստ, Բըւլուստի և Բլուն, ևայլն :

9° Թրանսիլվանիա . գլիմաւոր քաղաքները՝ Զերմանշտադ, Գլանդունուարէ, ևայլն :

10° Խորվաթիա և Սլավոնիա . գլիմաւոր քաղաքները՝ Ակրան, Ֆլենց, Վարսուարէն, ևայլն :

11° Տալմացիա . գլիմաւոր քաղաքները՝ Շեր, Աբուրու, Բախուլ, ևայլն :

Աւստրիոյ կը վերաբերին միայն իւլիէնեան կղզիները որ Աղբիական ծովուն արևելեան հիւսիսակողմը կիյնայ . որոց գլիմաւորներն են Շերս, և Վելիք, Լիւրեկէի մէջ . Արու, Բախուլ, Կրօսու, Պրացցու, Լեցենս, Քուցօս և Մելիուս Տալմացիայի մէջ :

#### Ճ. ԲՐՈՒՆԻԱՆ

172. Թետոնեան ասպետները ՃԳ. գարուն սկիզբները տիրեցին այս երկրիս արևելեան կողմին, Բրուսիոյ մեծնալը 1700 ին եղաւ, որ ատեն իրենց գրետերիկոս թագաւորը Լեհաստանի մէկ կատրին ալ տիրեց : Ետքէն նաև ստացան արևմտեան Բրուսիոյ մէկ մասը և Բողենի մեծ գքսութիւնը 1866 ին Բրուսիոյ թագաւորը գրաւեց Հանովը, Զեսս-Լյէքթօրալ .

Նասաւի դքսութիւնը , Հէսս-Հօմպուրկ և Ֆրանք-Փօրթ-ի Մայն : Եւ միացուց իր տէրութեանը Հօլո-թէյնի , Լաւեմպուրկի և Շէզվիկի դքսութիւնները : Գերմանի ոյ հիւսային երկրորդական տէրութիւննե-րը ստիլուեցան նոր դաշնագրութիւն մ'ընելու և հարաւային երկրորդական տէրութիւններն ալ զի՞նքը դլուխ ընդունելու . իրեն հետ միացան անանի որ Բրուսիոյ թագաւորը իրապէս Գերմանիոյ գլուխ ե-ղաւ : 1870 ին Գերմանիոյ միւս իշխանութեանց հետ միացած Գաղղիոյ դէմ պատերազմի բռնուեցաւ , և Գաղղիոյ յազմուելովը 1871 ի դաշնագրութեամբը Ալզասը և Լորենի գերմանական մասը՝ Բրուսիոյ հետ միացաւ և Բրուսիոյ Գ. Կուլիէլմոս թագաւորը կուլի-էլմոս Գ. կայսր հրաժարակեցաւ : Կառավարութիւնը սահմանադրական միավետութիւն է : Կրօնքը Լուտե-րականութիւն , բայց շատ Հռովմէականներ ալ կան :

157. Բրուսիոյ սահմանը հիւսիսին Պալմիկ ծովին է , արևելքն Լեհաստան , հարաւին Ալսարիս , ա-րևմուտքն Գերմանիա : Տարածութիւնը 550,000 քի-լոմէտր քառակուսի : բնակչութիւնը 24,500,000 : Երկիրը գրեթէ դաշտային և ջրոտ է , հիւսիսի կողմէն շատ զիմեր կան : Կլիման ցուրտ է անոր համար շատ ոլլ-տուղ չի հասնիր հոս : Բերքն է ամեն տեսակ հանք , կտու , աղէկ ձեռագործ , յախճապակ , ոչխար , աղ-նիւ բուրդ և չուխայ : Քաղաքականութիւնը և ար-ուեստները շատ ծաղկած , երկաթուղիները և վաճա-ռականութիւնը շատ յառաջ դացած են :

Բրուսիոյ թագաւորութիւնը 8 նահանգի կը բաժ-նուէր 1866 ին ուրիշ 8 նահանդներ ալ աւելցաւ և եղաւ ընդ ամենը 16 նահանգ :

Նահանդք Բրուսիոյ .

158. Պրանդեպուրէ : գլխաւոր քաղաքները .

Պլեյն . (655,000 բնակչ) տէրութեան մայրաքա-ղաքը , Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է :

Երկաթէ ու յախճապակէ բանուածքը խիստ աղ-նիւէ : Անուանի է համալսարանը .  
Բառնորմ , Քէսսենէն , Ֆրան+ֆօրն , Օուէր :  
2° Բօնէրանէ , գլխաւոր քաղաք Սնէնէն :  
3° Նահանդ Սուտոնիոյէ , Երկելի քաղաք Մակու-տուրէ , հոս ծնած է Ոթոն՝ շնչելցյզ մեքենան հընա-րողը :

4° Սէլէնիս . Երկելի քաղաք Պէտէլս :

5° Վէննէլլուս . Երկելի քաղաք Մէն-նիւր :

6° Նահանդ Ունանէ : որ կը պարունակէ Քէշուրէն գքսութեան երկելի քաղաքը Բուլնիս , Քէքս , Վէնէլ , Տէ-սելորդէ և Պօն :

Սորուն Ունէ գքսութիւնը , Երկելի քաղաք՝ Քուլնիս :

7° Բուն Բունուս , գլխաւոր քաղաքները՝ Քնէսուուրէն , Տանգին :

8. Բունէն մեծ գքսութիւն , գլխաւոր քաղաքը՝ Բո-չն :

9. Հանովը հին նահանդ գլխաւոր քաղաքը՝ Հանովը . հին մայրաքաղաք Հանովի թագաւորութեան և հայրենիք Հերցել աստղաբաշխի : Օհապուուտ :

10. Հեն-իլէ+նորալ , գլխաւոր քաղաքը՝ Քասէլ :

11. Նահանդ գքսութիւնը . գլխաւոր քաղաքը Վէ-պարէն :

12. Շէնդէնի :

13. Հէնն-յնէ գքսութիւնը , գլխաւոր քաղաքը՝ Քէ-էլ , Ալմէն :

14. Լաւայուրէն գքսութիւնը :

15. Հէսս-Հօմուրէն փոքր տէրութիւնը :

16. Նախին ազատ քաղաքը Ֆրան+ֆօրն ' կ Մայն : Բը-րուսիոյ թագաւորը նաև ստացաւ Հօնէնուլիէն-Հէննին և Հօնէնուլիէն-Այսբէնին իշխանութիւնները , որը Գեր-մանիոյ արևմտեան հարաւային կողմն են . և Եահդի ծովային հարստութիւնը համանուն ծոցին վրայ , Օլ-տեմպուրէն մեծ գքսութեան հիւսիսային կողմը Բրու-

սիան քանի մը կղզի ունի Պալթիկ ծովուն մէջ, որոց գլխաւորն է Ուստիւն կղզին, գլխաւոր քաղաքը Պէտիւն (4,000,000 բնակիչ) :

### Ժ.Ա. ԳԵՐՄԱՆՍԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

#### ԳԵՐՄԱՆՍԿԱՆ ԿԱՅԱՎՈՒԹԻՒՆ

174. Գերմանիան ամբողջապէս երրէք Հռովմայի տակ չի գտնուեցաւ, զանազան բարբարոս ժողովրդոց ձեռքն էր, որոնք շատ անգամ Եւրոպան կաւրըտը հէին, մինչև որ մեծն կարողո՞ւ իններորդ դարուն մէջ բոլորովին նուաճեց, և իր յաջորդները Գերմանիոյ կայսր ըսուեցան, բայց 1806 Ֆրանչեսկոս Բ. կայսրը պարտաւորեցաւ հրաժարիլ աւագութենէ (այսինքն Գերմանիոյ կայսր ըսուելէ). անկէ ետքը միայն Ա-ըստ-րէոյ կայսր ըսուեցաւ. և Գերմանական հին դաշնադրութիւնը կապնուեցաւ Գաղղիոյ պաշտպանութեանը տակ: Բայց 1815 ին Վիենայի ժողովին մէջ հաստատուեցաւ մինչև 1866 եղած Գերմանական դաշնակցութիւնը որ 55 տէրութիւններէ կը բաշխանար, որոնք իրարմէ անկախ կառավարութիւն ունեին, միայն արտաքին յարձակմանց դէմ փոխադարձ իրար պաշտպանելու համար միացած էին: Այս դաշնակցութեան գլխաւոր տէրութիւններն էին իրենց առաջնութեան կարգաւը, Աւստրիոյ կայսրը, Բրուսիոյ, Պալիերայի, Սանկերի, Վիերգեմպերիի թագաւորութափունիայի, Հանովերի, Սաքսոնիային ետքը 1866 ին Բրուգ գլխաւոր մասեր ըլլայ. 1° թագաւորութիւն Բրուգ գլխաւոր մասեր ըլլայ. 2° Հիւսիսային երկրորդական տէրութիւնները սիոյ. 3° Հիւսիսային երկրորդական ամենամասն կայսիսային դաշնակցութեամբ Բրուսիոյ Գերմանիոյ հիւսիսային դաշնակցութեամբ միան. 3° Գերմանիոյ հարաւային երկրորդական տէրութիւնները շատ առաջ գացած են, և երկաթուղիներն ալ ամեն կողմէ տարածուած:

Նահանդները, որք ասկէ առաջ Գերմանական դաշնակցութեան մէջ էին, և որք հիւսիս Գերմանիոյ մասած մասին հետ ալ քաղաքական կապ մը չունին:

Երկրորդական տէրութիւնները ի մասին քաղաքական վարչութեան իրարմէ անկախ են. բայց հիւսիսային դաշնակցութեան մէջ Բրուսիան բոլոր բանակաց հրամանատարութիւնը և օտար տէրութեանց հետ պաշտօնական յարաբերութիւնները իրեն վերապահած է ո Հարաւային տէրութիւնները անկախ են, այսու ամենայնիւ նիզակակից են Բրուսիոյ հետ: 1871 ին Գաղղիոյ տխուր պատերազմէն ետքը հաստատուեցաւ Գերմանական կայսրութիւնը, Բրուսիոյ թագաւորը կայսր հրատարակուելով, հիւսիսային Գերմանիայէն զատ հարաւային Գերմանիան ալ մէջն առնելով և նաև Ալզասի և Լորէնի կառավարութիւնը, որք Գաղղիայէն առնուեցան: Գերմանիոյ մէջ կրօնքն ազատ է, հիւսիսի մէջ Բողոքականութիւնը և հարաւի մէջ Հառվմէականութիւնը կը տիրէ:

175. Գերմանական կայսրութեան սահմանը հիւսիսին Պալթիկ ծովին ու Տանիմարքան է, արևելքէն Բրուսիան ու Լեհաստանը, հարաւէն Աւստրիան ու Զուեցէրին, արևեմուտքէն Գաղղիան ու Հոլանտան: Տարածութիւնն է 725.927 քառակուսի քիլոմէթր, բնակիչը 50.671.000: Երկրին հարաւի կողմը լեռնոտ ու անտառներով լեցունէ, և հիւսիսի կողմը գաշտային ու ջրուած: Բերքն է ամեն տեսակ հանք, մանաւանդ արծաթ ու կապար, որ Սաքսոնիայէն կենեն: Բոյսերուն մէջ անուանի են ցորենը, պտուղները, ծխախոտը, կանեփը և գետնախնձորը. կենդանիներուն մէջ ալ ձին: Ճարտարութիւններն ու գիառւթիւնները շատ առաջ գացած են, և երկաթուղիներն ալ ամեն կողմէ տարածուած:

ՏԵԽՈՒԹՅԱՆՔ	Բաշտամար- դութիւն	Տարած. քիչութեր բոկուսի.	Մայրաքացարք
1° ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՏԵԽՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ			
1 Թէ-ռուս։ Սաւանիոյ	2544000	14915	Տէլշտ
2 Սաւա-վայրուր	280000	5622	Վայրուր
3 Սաւա-ալինապուրէ	142000	1517	Ալինապուրէ
4 Սաւա-հայնինին	178000	2469	Մայնինին
5 Սաւա-քուրուրէ-իրուս	165000	1960	Քուրուրէ
6 Մէ+լէ-մուրուրէ-շլուն	560000	15595	Շլուն
7 Մէ+լէ-մուրուրէ-մերլոյ	98000	2715	Մերլոյ
8 Պը-նավի+	295000	5677	Պը-նավի+
9 Ունալլու	195000	2649	Տէստ
10 Շուացուրի-սոն- ուրունա-շնու	66000	858	Սոնուրունա-
11 , սուսուլուսուր	74000	965	Ուսուսուլուսուր
12 Հուշելոյն-օլունուրուրէ	314000	6366	Օլունուրուրէ
13 Վալուրէ+	59000	1117	Վարուրէ
14 Ուայու-իրաց	44000	575	Կրաց
15 Ուայու-շնուր	86000	826	Շնուր
16 Լիբրէ-ունուլու	111000	1150	Տէլուլու
17 Լիբրէ-շուրուրէ	51000	442	Պուտերուրէ
Ազատ քաղաքք			
18 Լի-ուէ+	51000	524	
19 Պը-լու	104000	192	
20 Համուրուրէ	298000	550	
	5491000	59662	
2° ՀԱՐՍԻԱՅԻՆ ՏԵԽՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ			
21 Պավերս	4774000	75722	Մինի+
22 Վէ-ըլեմուրէ	1648000	19459	Սլեմուրէ
23 Պար	1429000	15257	Բարլուրուն
24 Հեսս-ուրուշնուր	817000	7645	Տարշնուր
25 Լինինշնոյն	8000	159	Լինինշնոյն
	18000	154220	Մէջ
26 Օւշու Լուէն	1500000		
	10176000		

Պատերայի թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806 ին . կառավարութիւնը Սահմանադրական միավետութիւն է . իր բնակչացը երկու երրորդը Հռովմէական են : Պաւերան երկուքի կը բաժնուի , մէկը՝ բուն Պատերա գերմանիոյ կեղրոնը , միւսը Պատերա Ռէնան , Ուեն գետին ձախ եղերքը :

Գլխաւոր քաղաքներն են :

Մոնակոյ կամ Մէնանի+ (167.000 բնակիչ) մայրաքաղաք , Գերմանիոյ գեղեցիկ ու ծաղկած քաղաքներէն մէկն է . հոյակապ է թագաւորական պալատը , համալսարանն ալ անուանի :

Նուրբերէ (70.000 բնակիչ) , հոս շատ ծաղկած են ձեռագործները , որուն համար մեծ առուտուր կը լայ . ծոցի ժամացոյցը հոս գտնուած է :

Ուրիշ երեւելի քաղաքներն են Ա-խոպուրէ , Ունիսունա , Վէցպուրէ , և այլն :

### ՍԱՐՍՈՒԱԱ

Սաւանիոյ թագաւորութիւնը 1806 ին հաստատուեցաւ . ժողովրդեան մեծ մասը հողոքական՝ բայց թագաւորը Հռովմէական է :

Գլխաւոր քաղաքներն են .

Տրենու (146.000) , Էլվա գետին վրայ գերմանիոյ գեղեցիկ և աւելի ճարտար քաղաքներէն մէկն է . Երանելի է գետին վրայի կամուրջը , և մայր եկեղեցին , ուսման կողմանէ ալ գերմանիոյ Աթենքն ըսուած է :

Լիբույ կամ Լայբու (85.000) , անուանի է ասոր համալսարանը և մեծ տօնավաճառը և գրքի առուտուրը : Լայպինից փիլիսոփան ալ հոս ծնած է :

Ուրիշ երեւելի քաղաքներն են :

Շեֆէն , Ֆայութէն , Պատշէն :

ԱՀԲԹԵՄՊԵՐԻ

Վէրնեալերի 1806 ին Սահմանադրական թագաւորութիւն եղաւ, իր բնակչացը երկու երրորդը Բողոքական է:

Գլխաւոր քաղաքներն են.

Անտեսկար (70,000) մայրաքաղաք, Նէրել գետին վրայ, ուստիւնքն ու արուեստները շատ ծաղկած են:

Ուշ (25,000) Դանաւին վրայ Գերմանիոյ ամուր ու անուսնի բերդաքաղաքներէն մէկն է:

Երևելի են նաև Լոռիադուրի, Էսէնիչն, Հայլարն, և այլն:

Գերմանական գանակցութեանց կամ կայսրութեան ուրիշ գլխաւոր քաղաքներն են.

Հայադուրի (250,000 բնակիչ) աղաս քաղաք, Էլլո գետին վրայ, Գերմանիոյ առաջի վաճառաշահ քաղաքն է. անուանի է շաբարի գործարանները:

Պրես (70,000) աղաս և վաճառաշահ քաղաք Վէնչէ վրայ:

Մակարաց կամ Մայն (45,000), Գերմանիոյ խիստ ամուր քաղաքն է, հոս ծնած է Յովհաննէս կուղդէն-պէրի տպագրութեան գտնողը:

Ուրիշ Երևելի քաղաքներն են.

Պրուսիակ, Լիոն, Եվնա, և այլն:

Ալզաս Լորենի կառավարութիւնը: 1871 ին դաշնադրութեամբ Գաղղիայէն առնուած, որ կը պարունակէ ստորին Ռէնի Գաղղիական հին մասը, և վերին Ռէնի մէկ մեծ մասը, Մօնէլ և Մէտին չորս հինգերորդը և վոսժի փոքր մասը: Գերմանիոյ միացած գըլ խաւոր քաղաքներն են.

Անդաշուրէ, Մէց, Մէլիուշ, Գումար, Թէնիէլ, Անդիէլն, Դուքս-Մալէն և այլն:

Ճ.Բ. ԲՈՐԹՈՒԿԱՐԱ

176. Բորթուգալի հին ատենը Լուսիտանիա կըս-ուէր. 712 էն 715 Մաւրիտանացւոց (Արաբացւոց) ձեռքը մնաց: Ալֆոնս Հենրիկոս՝ Միւլիմանից վրայ մեծ յաղթութիւն մը ընելով Բորթուգալի թագաւոր հրատարակուեցաւ 1159 ին, բայց 1580 էն մինչև 1640 Ապանիցի գատաւորաց ձեռքը մնաց, որ ատեն Յովհաննէս Դ. թագաւոր եղաւ Բորթուգալցւոց: Կառավարութիւնը Սահմանադրական միապետութիւն, կը-րոնքը Հառմէկական:

177. Բորթուգալի սահմանը հիւսիսէն և արևելքէն Սպանիան է, հարաւէն ու արևմտաքէն Ալյանտէան ովլիանուը: Տարածութիւնն է 94,200 քառակուսի քիլոմէթր, բնակիչը 4,000,000:

Երկիրը լիունու, ջրոտ ու բարերեր է, բայց ըլչ մշակած: Կիման բարեխառն ու առողջ: Բերբէն է ա-մեն տեսակ հանք, մանաւանդ ոսկի, արծաթ, եր-կաթ, պղինձ, կապար, աղ, մարմարին. պատուղներն են լիմոն, նարինջ, խաղող, մետաղն ալ աղնիւ է:

Գլխաւոր քաղաքներն են.

Լիունու (225,000 բնակիչ) մայրաքաղաք, Թակէն բերնին վրայ Եւրոպայի մեծ ու գեղեցիկ նաւահանգիստներին մէկն է, Երևելի է Ալյանտարայի ջրանցքը որ 55 կամարի վրայ շինուած է ճերմակ մարմարինէ, 1755 ի Երկրաշարժէն գրեթէ բոլորովին կործանեցաւ:

Ուրիշ Երևելի քաղաքներն են Օբուրու, Էլիս, Գու-յինդրա, Պրակա, և այլն:

Բորթուգալի Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն են.

1° Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի Տէն և Կոս քաղաքները, Մադար, էղին ի Զին (626,000 բնակիչ):

2° Աֆրիկէի մէջ՝ Ասորետն էղիները, Մադեր և Սարբի թագաւան էղիները, Դուշէ էլեոյ, էղիները, Սենեկամալոյ

արևմտեան կողմը՝ կեպա քաղաքը, չ գոնիոյ, Անդալս ու  
Թենէալս, Մոլաժիւ, և չ Մոնմոդաբան, Զանէդորբէն ծո-  
վեզերքը այլէայլ տեղուանք (2,770,000 բնակիչ)։

3° Ովկիանիայի մէջ՝ Դէմոքէ մէկ կտորը (918,000)։

Ժ. ՍՊԱՆԻԱ.

178. Սպանիան ատենով Հռովմացեցւոց ձեռքն էր։  
ութերորդ դարուն սկիզբները Արաբացիք տիրեցին  
մինչև որ 1491 ին ֆերտինանտոս և իշապել կրանա-  
տան առնելով վանեցին զանոնք։ Քիչ մը եաքը Քրիս-  
տափոր Քոլոմպոս Ճենովացի նաւապետին ձեռամի Ա-  
մերիկան ալ գտնուելով, Սպանիացիք խիստ մեծցան  
ու հարուստ թագաւորութիւն մը եղան։ Բայց այս  
դարուս սկիզբները Գուառ և Բոբուրէտօ կղզիներէն  
դատ միւս Ամերիկայի երկիրները կորուսին։ Իրենց  
ծովային զօրութեան տկարութիւնն ալ չի ներեր ու-  
րիշ դաղթականութեանց հետ յարաբերութիւններ  
ունենալու։ 1869 ին վերջները իրենց թագուհին վա-  
խուցին հասարակապետութիւն ընելու նպատակաւ,  
բայց հիմա իտալիոյ թագաւորին որդին Ամետէ կը  
թագաւորէ Սպանիոյ ։ Երկրին կառավարութիւնը Ատհ-  
մանադրական միապետութիւն է, կրօնքը Հռովմէա-  
կան։ Եւրոպիոյ մէջ միայն այս երկիրն է ուր ճարտա-  
րութիւնը քիչ յառաջ գացած է։

179. Սպանիոյ սահմանը հիւսիսէն Գաղղիան է, ա-  
րևելքէն ու հարաւէն Միջերկրական ծովը, արևմուտ-  
քէն Բորթուգալը։ Տարածութիւնն է 500,000 քիլո-  
մէթր քառակուսի, բնակիչը 16,000,000։ Ծովեզերքին  
ոդը տաք է, մէջ տեղուանքը բարեխառն։ Հովը քիչ  
մշակած է։ Գլխաւոր բերերն են երկաթ, սնդիկ  
կապար, պղինձ, ոսկոյ հանքը ատենով առատ էր,  
բայց հիմա երեսէ ձգուած է, արծաթի հանք ալ քիչ  
ունի։ Գինին խիստ աղնիւ է։ ունի նաև լիմոն, նա-

րինջ, ձէթ, շաքար, բամպակ, մեղք, մետաքս։ Ան-  
ոււանի է Անտալիա գաւառին ձին, և Մերքիսոս ըս-  
տած ոչխարը, որ խիստ բարակ բուրդ ունի։

Սպանիոյ գլխաւոր քաղաքներն են։

Մարտիրոս (776,000 բնակիչ) Մանզանարէի վրայ մայ-  
րաքաղաք 1465 էն ի վեր։

Պարսէլնա (252,000 բնակիչ) Միջերկրականի վրայ,  
երկրին ամուր քաղաքն է, նաւահանդիսար խիստ գե-  
ղեցիկ։

Սլէլիս (158,000 բնակիչ), Վալենցիա (145,000),  
Կրանոս (100,000) Մարիտանացւոց ետքի մայրաքա-  
ղաքն էր։ Լուրդարէնէ, Բալյա այս պղտի նաւահան-  
դիսէն ձամբայ եղաւ Քրիստափոր Գոլոմպոս 1492 ին  
Ամերիկան գտնելու համար։

Սպանիոյ Եւրոպայէն գուրս ունեցած երկիրներն  
են։

1° Ա.վրիկէի մէջ՝ Անգոլա, Սլէլիս, Գանարէն հը-  
շները և Կուէնայի ծոցին մէջ մէկ քանի մանր կը գ-  
ղիներ (290,000 բնակիչ)։

2° Ա.մերիկայի մէջ՝ Գուառ և Բոբուրէտօ հողները  
(1,800,000)։

3° Ովկիանիայի մէջ Փէլիպէն և Մարտիրոս հողները  
(2,700,000 բնակիչ)։

Ժ. ԽԱՆԻԱ.

180. Հռովմի հիմնարկութիւնը Քրիստոսէ 753 տա-  
րի յառաջ էր, որ ատեն թագաւորներով կը կառա-  
վարուէր, անկէ ճիշտ 243 տարի ետքը հասարակա-  
պետութիւն եղաւ, որ երթալով մեծցաւ և հին աշ-  
խարհին մեծ մասին աիրեց, Քրիստոսէ 50 տարի յա-  
ռաջ Օքոստոս կործանեց հասարակապետութիւնը և  
ինքզինք կայսր հրատարակեց, որոյ յաջորդները հա-  
սարակապետութեան բոլոր նահանգները մինչև 400

տարի անկորուստ պահեցին. Հինգերորդ դարուն մէջ բարբարոսները Հռովմի կայրութիւնը բաժնեցին և իտալիան գրաւեցին առաջ Գոթացիք և ետքը. Լոմպարտացիք, 774 ին մեծն կարողա զանոնք նուաճեց, իր մտաւընէն ետքը իտալիան զանազան տէրութեանց բաժնուեցաւ, շատ անգամ ալ մեծ մասը Գերմանացւոց, Գաղղիացւոց ու Սպանիացւոց ձեռքն անցաւ: Ժ. Դարուն վէրջերը Գաղղիացիք առին, բայց 1814 ին մեծին Նաբոլիոնի անկմանը հետ իտալիան թագութեանց բաժնուեցաւ, Թագաւորութիւն Սարտենիոյ, Երկու Սիկիլիա, Լոմալարտիա և Վենետիկ, Թուքանայի մեծ դքսութիւն, Եկեղեցւոց տէրութիւն. Բարմայի, մօտենայի, Լուքայի և Մասա-Քարրարայի դքսութիւնք: 1859 ին միայն Վենետիկը Աւստրիոյ ձեռքը մնաց և Լոմալարտիան անցաւ Սարտենիայի թագաւորութեան, որոյ հետ միացաւ նոյն տարին նաև Բարմա, Մոտենա, Թուքանա, Լուքան, և Մասա-Քարրարա, Երկու Սիկիլեան և Եկեղեցւոց տէրութեան մեծ մասը և ըստեցաւ ամենը Գոցեալ Բաժառունիւն իտալիոյ. 1866 ին Վենետիկին ալ միացաւ իտալիոյ:

Արդէն մայրաքաղաք Եղած էր 1865 ին ֆէքէնցա: Իտալիան Գաղղիոյ թողուց Սավոյան և Նիսի կոմսութիւնը:

1870 Հռովմ Եղաւ իտալիոյ մայրաքաղաք :

1814 իտալիոյ սահմանը հիւսիսէն Ալպեան լեռներն են, արևելքէն Ադրիական ծոցը, հարաւին ու արևմուտքէն Միջերկրական ծովը և Գաղղիան: Տարածութիւնն է 296,000 քիլոմէթր քառակուսի, բնակիչը 25,000,000. Կրօնքը Հռովմէական: Կիման առաք և ընդհանրապէս առողջ է: Գլխաւոր բերքերն են ազնիւ քար, երկաթ, պղինձ, բամզակ, շաքար, մեղք, ձէթ, նարինջ, լիմոն, բրինձ: Անուանի է մետաքսէ բանուածքը, ապակին, յախճապակը: Վաճառականու-

թիւնն ու արուեստները ընդհանրապէս ետ մնացած են, միայն արձանագործութիւնը, պատկերհանութիւնը, ճարտարապետութիւնը և երաժշտութիւնը անուանի եղած է:

Իտալիոյ գլխաւոր քաղաքներն են,

Հռովմ (210,000) իտալիոյ մայրաքաղաքը շինութեանց և գեղարուեստից կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է: Եղական շինքերն են Սուրբ Պետրոսի տաճարը, և վատիկանի պալատն ու գրատունը:

Եկեղեցւոց հին տէրութեան ուրիշ երեւելի քաղաքներն են, Պալենէտ, Անդրնա, Ֆեռարա, Շեզոնէտ՝ ասոր մօտ է որ Աննիբաղ Հռովմայեցւոց յազդեց:

Զէվինավէրտ՝ Միջերկրականի եղերքը նաւահանգիստ է:

Թուքանայի մեծ դքսութեան մէջ, Ֆէքէնցա (120,000 բնակիչ) Արնօնի վրայ, մեծադործ և անուանի է մայր Եկեղեցին, Ա. Լաւրենտիոսի Եկեղեցին, Մետիշիներուն մատուռը, Շիդդի պալատը, հնութեանց և բնական պատմութեանց պահարանը: Հոս ծնած է Տանթէ բանաստեղծը, և Ամերիկոս Վեսուչչի:

Լիչնայ (90,000) ամուր քաղաք: Իտալիոյ Երևելի նաւահանգիստներէն մէկն է և արևելքի հետ ունեցած վաճառականութեան կեղծոնը:

Լուստ (25,000 բնակիչ), հին մայրաքաղաք փոքր աէրութեան մը որ 1847 ին թուքանայի միացաւ:

